



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11024

891.99

8-34



891.99

Օ-34

ս

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես չեմ երգում: Իմ երգերում վշտալի
Այն թշուառն է՝ անարգ բախտից հալածուած,
Իւր վեճակը անվերջ սգում ու լալի,
Իւր ցաւերը երգով պատմում նա մարդկանց...

Ես չեմ երգում: Իմ երգերում ցաւատանջ
Այն հարազատ իմ տառապեալ խեղճ եղբօր
Գութն լսում էք խուլ հեծեծանք ու հաւաչ,
Եւ կարգում էք ազգիս վիշտը գարեոր...

ՀՐԱՏԱՐԱԿԵՅ ԱԹԱՆԱՍ ԺԱՄՀԱՐԵԱՆ.

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԹՈՒԴԱՐԵԱՆԻ.

1891

2662

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1891 г. 8 Января.

2 0 0 3



3801-48
Типографія М. Бархударянъ, Газетный пер. д. Ляпозова, Москва

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐ

ՄՕՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Սուրբ լիշատակիդ, մայր իմ նազելի,
Ես անկեղծ երգըս բերում եմ պարզև.
Թող անշուք շիրմիդ նա անջնջելի
Լինի զարդարուն կոթող յարատև...

ԳԵՐՈԳ ԲԱՆԱՆԱՅ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ.

Ի Մ ՈՒԽՏԸ

Քանի զեռ սրտումս վառվում է կրրակ
 Անկեղծ, սրբազան ոգևորութեան,
 Եւ քանի ձայնըս աղատ, համարձակ
 Դեռ չէ խլացրել սե զրոշմը մահուան.
 Քանի զեռ հոգիս պահում է իւր մէջ
 Լիառատ պաշար ազնիւ կրքերի...
 Եւ քանի սիրոյս ջընորքը անշէջ
 Դեռ լի աղբիւր է վառ երազների.—

Ես պիտի երգեմ և ջատագովեմ
 Անաչառ մարդոց մեծաշուք գործեր.
 Ես պիտի երգեմ և փառաբանեմ
 Սիրոյ քաղցրութիւն և կուսի պատկեր.
 Ես պիտի երգեմ անկաշառ ձայնով,
 Սուրբ ճշմարտութեան զրօշակը ձեռքիս.
 Ես պիտի երգեմ... թէկուզ այդ երգով
 Հալածանք միայն վաստակեմ անձիս...

Թո՛ղ տգիտութեան թանձր խաւարում
 Խարխափողների խուռն բազմութիւն,
 Սպառնալով դրօշիս սոսկալի անկում,
 Ճգնէ խորտակել նորա վեհութիւն.
 Թո՛ղ ստրկահոգին՝ կրքից կուրացած,
 Նախանձ ու սև թոյն թափէ իմ գլխին.
 Թո՛ղ բռնաւորը գոռայ կատաղած.
 «Մահ այդ անպատկառ, չնչին մեղութիւն...»

Տըզօ՛ր է ուխտըս, հըզօ՛ր իմ հաւատ,
 Ինձ չէ սարսեցնում կեանքի փոթորիկ.
 Ճակատըս պայծա՛ռ, սիրտըս անվհատ—
 Ես ձեզ խղճում եմ, փոքրոգի՛ մարդիկ...
 Փրփրացէ՛ք անվերջ, զոռացէ՛ք ուժգին,
 Թո՛ղ օդ զղրդեն ձեր ճիչ, աղաղակ.
 Ես չեմ վըղովում. վե՛հ է իմ հոգին,
 Եւ անընկճելի հոգոյս նպատակ...

1888. 11 դեկտեմբերի.

Պ Ա Տ Կ Ե Ր

(Նուէր նկարիչ Գէորգ Բաշինջադեանին.)

Խորին գիշեր է: Յողնած, վաստակած
 Երկիրը, որպէս քրանաջան մշակ,
 Գընած է անդորր, ասես, մոռացած
 Յերեկուայ անվերջ հոգսերն ու տանջանք...

Եւ չի վըրդովում ոչ մի արարած
 Մայր-երկրի այդ մեղմ՝ նինջը անուշիկ.
 Խաղաղութիւն է չորս կողմը տիրած—
 Լուռ է բընութիւն, լուռ է և՛ երկինք:

Եւ աստեղազարդ պայծառ եթերում
 Հանդարտ լողում է նազելի լուսին,
 Եւ բուռն սիրոյ հուրը աչերում՝
 Օրօր է կարդում քաղցրանինջ երկրին:

1889. 5 յուլիսի.

ԲԱՆՏԱՐԱՆԱԼԻ ԵՐԳ

Ա՛խ, թէ երկինք դէթ մի վայրկեան
Հսէր կրճքիս հառաչանք,
Փայլէր ինձ սուրբ ազատութեան
Վառ, կենսատու արեգակ.

Ա՛խ, թէ և ես կարենայի
Որպէս արծիւ անարգել
Դէթ մի ըռպէ ազատ կեանքի
Ազատ օգուտ սաւառնել.—

Որպիսի՜ ջերմ, լի փափագով՝
Կարօտ պայծառ երկնքի՝
Կը թռչէի ես խնդալով
Դէպ հայրենիքս անձկալի:

Դէպ այն երկիր նուիրական,
Ուր սահեցան անխռով
Ջընաղ օրերն իմ մանկութեան
Լի դրախտային սուրբ սիրով:

Դէպ այն երկիր երջանկալեց,
Ուր մայրիկըս նստելի
Իւր ջերմ գրկում պարզեց ինձ
Եւ կեանք, և սէր, և հողի:

Ուր առաջին ես զգացի
Եւ սիրոյ վեշտ, և՛ հրճուանք.
Ուր ես անյաղ ճաշակեցի
Կեանքի վայելք ու գգուանք...

Ա՛խ, հայրենիք, երկիր՝ չքնաղ,
Ե՛րբ պէտք է իմ խեղճ հողին
Հանգչի անդորր, հանգչի խաղաղ
Քո կենսաբոյր վարդ-կրճքին...

1889. 1 ապրիլի.



ԵՐԳԵՐ

(Հ ա յ ն է Ի ց.)

I.

Մեր իղձն ու փափաղ ծաղկում են, փթթում,
Որպէս ծաղիկներ քաղցրաշունչ գարնան.
Ծաղկում են, բայց և նորից թարշամում,
Եւ այդ կրկնվում է մինչ կեանքի վախճան:

Մեր վառ կրքերի այդ անվերջ խաղից
Թունաւորուած է իմ սէրը վաղուց.
Օ, ի՞նչ խելօք ես, սիրտ իմ վշտալից,
Որ կամիս զաղրել զու բաբախելուց. . .

II.

Անհոգ կացիր, ես չեմ պատմում
Երբէք մեր սէրն աշխարհին.
Թէպէտ յաճախ ես իմ երգում
Քեզ գովում եմ, իմ անգի՛ն:

Ո՛չ. ես հռու մարդկանց աչքից
Վարդի ծոցում պահեցի
Գաղտնի սէրը մեր ախտալից,
Եւ իմ երգով կնքեցի:

Եթէ անգամ երբեմնապէս
Դաւաճանէ մեզ այն վարդ,
Եւ մեր սէրը, վառ կայծի պէս,
Նա դուրս ցոլայ, — ի՞նչ մեծ դարդ:

Ես զիտեմ, որ մենք մարդկանցում
Ձենք զարթեցնիլ կասկածանք.
Մարդիկ բիրտ են, մարդկանց աչքում
Սիրոյ կայծն է — զառանցանք:

III.

Որպէս չար ծերուկ, արնալից աչքով
Մըռայլ երկինքը նայում է երկրին
Եւ սեւ ամպերը խիտ-խիտ շերտերով
Դիզել է իւր մութ, կնճռոտ ճակատին:

Լալիս են ծաղկունք, լալիս ու թօշնում
Երկնքի այդ չար, դաժան հայեացքից.
Լալիս, թօշնում են և մարդու սրտում
Երգ ու զգացմունք, խանդ, աւիւն ու իղձ:

1887. 13 հոկտեմբերի.



ՍՕՆԷՏ

Թո՛ղ քեզ աշխարհը այս ունայնասէր
Ծաղրէ կուրօրէն, նազելի՛ ընկեր,
Որ դու քո շքեղ այդ փարթամ կեանքում
Միայն իմ անզարդ երգն ես դու սիրում:

Թո՛ղ սէրն անարգող մարդիկ անզգայ
Քեզ կոչեն. «անփորձ, անմիտ երեսայ»,
Եւ մատաղ սրբաիդ թախիճն ու հրձուանք
Համարեն հիւանդ հոգու զառանցանք:

Անվերջ չէ փայլը շըլացնող ոսկու—
Վաղ-ուշ սեւ ժանգն է նորան պատելու.
Բայց անշահ սէրը, որպէս վառ արեւ,
Պայծառ կը շողայ անվերջ, յարատեւ:

Եւ քո անունը, մանո՛ւկ աննման,
Իմ պարզ երգերում կ'ապրի յաւիտեան:

1886. 3 դեկտեմբերի.



ԳԵՐՈՒՆ

(Մանկական երգ.)

Եկաւ զարուն. մայր բընութիւն
Իւր խոր քրնից արթնացաւ,
Դէմքը լուաց սառն անձրևով
Նոր-հարսի պէս զուգուեցաւ:

Ծառը ծաղկեց, վարդը բացուեց,
Կանաչ հազան սար ու ձոր.
Խնդաց աշխարհ և ջերմ սիրով
«Գարնն» — լսուեց չորս բոլոր:

Հնչեց սոխակն անուշաձայն
Իւր կախարդիչ զայլայլելի
Եւ աւետեց հոգեակ-վարդին
Գարնան ուրախ աւետիք:

Թռաւ, եկաւ և ծիծեռնաժի
Կրտուրի տակ ճըլվըլաց,
Եւ նորոգեց իւր կիսաւեր
Հին օթեանն անմոռաց:

Անխոնջ ու ժիր մեղուն բացեց
Իւր քնքուշիկ թևիկներ
Եւ բզկալով թրուաւ դէպ դաշտ,
Դէպ հիւթալից ծաղիկներ:

Եւ անտառում փրչեց մեղմիկ
Գարնան զեփիւռն հովասուն.
Կենդանացան դաշտ ու հովիտ,
Մեղմ խոխոջեց և առուն:

Իսկ գառնարած փոքրիկ Սաքօն
Մախաղը կապած մէջքին՝
«Դէ՛հ, մատղաշներ, առանջ ընկէք»,
Ոգևորեց իւր հօտին:

Ինքն էլ ընկաւ յետևիցը,
Սրինդը դրաւ շթունքին,
Եւ գառների մայիւնի հետ
Ողջոյն սուլեց գարունքին:




«Բարով եկար, սիրուն զարուն,
 «Ճաղար բարով, անգին հիւր.
 «Մեր արտերին կեանք պարգևող՝
 «Դու քաղցրութեանց լի աղբիւր.

«Քո անձրեն է մեր այգիքը
 «Առատ ջրում, ծաղկեցնում.
 «Քո արեն է մեր դաշտերից
 «Յուրա ու ձրմեռ հալածում:

«Դու ես աշխարհը խնդացնում,
 «Բընութեանը կեանք տալիս.
 «Միայն, ափսոս, որ տարենը
 «Մէկ անգամ ես հիւր գալիս. . .»

1886. 5 ապրիլի.



ԶԵՅԹՈՒՆԻ ՀՐԴԵՂ

1887 թ.

(Հատուած.)

...Ահա նա առիւծ, հերոս Զէյթունցին,
 Սնյաղթ զաւակը ազատ բընութեան.
 Ձեռքում հրացան, սուսերը մէջքին՝
 Կանգնած է առջև: Նայեցէք նորան—
 Որպիսի հսկայ և պարթև հասակ,
 Որպիսի ուժեղ, հրօր բաղուններ,
 Թիկունքը ամուր, կուրծքը լայնարձակ—
 Ահա քաջութեան կենդանի պատկեր.
 Ահա հայ հերոս, որի քաջ հոգին
 Վառուած է հրով վեհ ազատութեան,
 Եւ որի առջև ոսոխ թշնամին
 Դողում է, որպէս տերեր աշնան:

Նա ահռելի է... Բայց, աւանդ, այսօր
 Մի ինչ-որ ծանրը, սրտամաշ թախիժ՝
 Խեղդած հսկայի ձայնը ահաւոր՝
 Արցունք է քամում նորա աչքերից..

Արցունք... «Հ հերոս, ես չեմ հաւատում,
Մի՞թէ ողբում է, իրաւ, քո հոգին.
Պատմի՛ր, ի՞նչ վիշտ է քո սիրտը կռծում,
Այդ ի՞նչ սեւ ամպ է քո զուարթ դէմքին...
Ներսիս լուռ է... բայց ահա յանկարծ
Ընդհատվում է այդ խորին լուռթիւն,
Եւ ես լսում եմ արցունքից խեղդուած
Քաջի միմունջը. «Այրվում է Զէյթուն...»

Այրվում է Զէյթուն... ողբալի՜ պատկեր.
Նայեցէք ահա բոցը կատաղի
Հափում է անխնայ և դարձնում աւեր
Անառիկ վայրը հայ հերոսների...
Այրվում է Զէյթուն... օ, ծանրը հարուած.
Սարսափ է տիրել ամբողջ Տաւրոսին.
Ողբում են հայրեր՝ ծուխի մէջ խեղդուած,
Ողբում են մայրեր՝ որդիքը զրոկին.
Այրվում է Զէյթուն... օգնեցէ՛ք, հայի՛ր,
Դառն է ճգնաժամ, տխուր է վայրկեան...
Ո՛հ, մեր հարազատ եղբայրք ու քոյրեր
Անտուն, անտէր են... հասէ՛ք օգնութեան...

ԱՆՋԵՏՄԵՆ ԺԱՄ

Տուր ինձ քո ձեռքը, ո՛վ կոյս նաղելի,
Թող վերջին անգամ սեղմեմ ես նորան
Իմ մատաղ կրծքին, ուր անջնջիկ
Դրոշմուած է պատկերդ չքնաղ, կուսական:

Թող վերջին անգամ քեզ հետ միասին
Վայելեմ սիրոյ անհուն քաղցրութիւն,
Եւ ջերմ արցունքով քեզ, ընկե՛ր անդին,
Վկայեմ սրբախ վառ մտերմութիւն:

Եւ սիրանուէր համբոյրն անուշիկ
Թող վերջին անգամ անջատման ժամում
Սրբազան ուխտի զրոշմէ կընիք
Մեր սիրաբորբոք մատաղ սրտերում:

1888. 15 դեկտեմբերի.

ԱՇՆԱՆ ՎԵՐՁՐ

Փրչեց ցրտաշունչ քամին հիւսիսից
Եւ այլանդակեց բընութեան պատկեր.
Մերկացան այգիքն իրանց զարդերից,
Մերկացան սար, ձոր, անտառ ու դաշտեր:

Երկինքը տխուր, մռայլ, ամպամած՝
Էլ չի շողշողում լուսափայլ արեւ.
Երկրի երեսը մշուշով պատած՝
Երկնքից անվերջ թափվում է անձրեւ:

Լռել է սոխակ: Պարտիզի խորքում
Ո՛հ, էլ չի լսվում քաղցր դայլայլիկ.
Լռել է սարեակ. չուել է ծիծառ.
Էլ չի գեղգեղում սիրուն գեղձանիկ:


Կեռասն ու ծիրան, կարմրաթուշ խնձոր
Էլ չեն զարդարում պարտիզի ծառեր,
Այժմ նոցա տեղ մերկ ճղանց վերայ
Քամուց խշշում են դեղնած տերեւներ:

Տխուր նստել է և այգեպանը
Իւր մութ ու խոնավ, ցուրտ կացարանում.
Է՛հ, էլ ի՞նչ սրտով շրջի նա այգին,
Երբ մերկութիւն է նորա մէջ ախրում:

Աւերակ դաշտում, ամայի արտում
Արդէն դադրել են հոգս ու աշխատանք.
Ձի շարժվում արօր, լուռ է սերմնացան,
Դաշտային կեանքի կորել են բերկրանք:

Փրչում է քամին, փրչում կատաղած,
Ձմրան զալուստը գութում աշխարհին.
Նայում ես շուրջդ—սո՛ւգ, ամայութի՛ւն,
Ողբում է երկինք, ողբում է գետին...

1886. 5 նոյեմբերի



ԳԵՐՈՒՄ ԶԱՆԱԿԸ

Ծնուեց նա ի զուր, ապրեց անօգուտ,
Թշնամի դարձաւ սուրբ ճշմարտութեան,
Պաշտեց նա խաւար, խօսեցաւ միշտ սուտ,
Խեղդելով իւր մէջ խղճի արդար ձայն:

Ի՞նչ էր բարութիւն, խրնամք, գութ, փրկանք,
Սէր գէպի աղքատն—այդ նա չըզիտէր.
Նորա չար սիրար զգում էր հրձուանք,
Տեսնելիս տանջուող բիւր անմեղ զոհեր...

Եւ կնքեց նա իւր կեանքը երկրաւոր,
Ամբարշտութեան գրոշմը ճակատին.
Նա մեռաւ որպէս խարդախ, նենդաւոր,
Որպէս հալածիչ աղնիւն ու բարին...

Բայց մի ամբողջ ազգ հոգով ստրկացած,
Խորին կրսկիծով սգաց այդ փախճան.
Եւ դարուս ոգով խալառ կուրացած,
Նուիրեց նորան փառաշուք արձան...

1889. 18 փետրուարի.

Ա. ՊԼԵՇԵԵՎԻՑ

Ի.

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Հալվում է ձիւնը, վաղում է առուն,
Ժպտում է արդէն դարունը պայծառ.
Շուտով կը երգեն սոխակներ սիրուն,
Եւ թաւ կանաչով կը զուգուի անտառ:

Անամպ, անդորր է կապուտակ երկինք,
Ծաղկում, փթթում է չքնաղ բընութիւն,
Եւ հըզօր զարնան արեւը քաղցրիկ
Ցօղում է երկրին լոյս ու ջերմութիւն:

Կեանք և բերկրանք է ամեն տեղ տիրում,
«Գարնուն» ես կարգում ամենքի գէմքին.
Եւ նա՛ է ողջից առաւել խնդում,
Ով զխմացել է անթիւ ցաւերին...

Բայց կայտառ մանկանց խնդալից ձայներ
Եւ անհոգ թռչնոց տաղերն ըզգայուն
Ինձ պարզ ասում են—թէ ով առաւել
Սիրում է նոր կեանք և ազատ դարուն:

1886. 14 մայիսի.

II.

ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԵՆ

Որքան ուրախ և երջանիկ մեզ կը ժպտէր այս աշխարհ,
Թէ որ բոլոր մարդիկ անկեղծ սէր տածէին դէպ իրար.
Թէ հարեանն հարեանին ձեռք մեկնելով օգնութեան՝
Ասէր. «Զէ որ մենք եղբայր ենք, տո՛ւր ինձ ձեռքդ, եղբայր ջան»:

Եւ ինչո՞ւ մենք չենք հալածում քէնն ու ռիւք մեր սրտից,
Եւ չենք կազմում մի գերդաստան օրհնաբանուած Արարչից.
Ինչո՞ւ մեզնից ամեն մէկը քաղցըր ժպտով ընկերին
Զի ասում. «Ե կ, մենք եղբայր ենք, եկ դու ինձ մօտ, իմ անգին»:

Հո՛ւ հարուստ ես և միշտ զուգուած, կեանք ես վարում երջանիկ,
Իսկ ես աղքատ և միշտ քաղցած—անզամ չունիմ հազնեղիք.
Բայց երկուսիս կրծքի մէջ էլ անկեղծ սիրտ է բարախում,
Ուրեմն մենք եղբայրներ ենք, էլ հօր ես ինձ անարգում:

«Դու ատում ես խարդախութիւն, սուտն հալածում չարաչար,
Եւ վեհ խօսքը ձգմարտութեան սուրբ քարոզ է քեզ համար.
Ես էլ նոյնպէս՝ ողջ հոգովքս նուիրում եմ բարութեան.
Տո՛ւր ինձ ձեռքդ, ուրեմն մենք եղբայրներ ենք անբաժան:

«Դու չես խաբում ո՛չ ուժեղին, ո՛չ տկարին կեղեքում.
Ես էլ նոյնպէս, ինչպէս և դու, սուրբ եմ պահում իմ խոստում.
Երկուսըս էլ մի աջքով ենք նայում բախտին—մարդկութեան.
Այո, այո, եղբայրներ ենք, տո՛ւր ինձ ձեռքդ, եղբայր ջան:

«Քեզ սիրում էր քո մայրիկը, սիրում հոգով ու սրտով.
Իսկ իմ մայրը ինձ պաշտում էր, միշտ երդվում իմ արևով.
Ի՞նչ փոյծ թէ դու մեծ իշխան ես, ես մի տկար շինական.
Զէ որ իրար մենք եղբայր ենք. արի՛ բազմենք մի սեղան:

«Մենք սիրում ենք երեկոյեան վերջալոյսը արևի,
Հալոսնիքը վեր ենք դասում ողջ զանձերից աշխարհի.
Կեանքի խաչը երկուսիս էլ ձնշում է մի շտ, անդադա՛ր.
Ուրեմն մենք եղբայրներ ենք՝ իրաւունքով հաւասար:

«Բայց ահա մեզ, եղբայր, արդէն սպառնում է մի այլ հարուած.
Խոր ծերութիւն և ապա մահ—ահա՛ վախճան մեր կենաց.
Եւ շիրիմն է այնուհետեւ դառնում վերջին մեր կայան.
Այո, այո, բոլոր մարդիկ եղբայրներ են անբաժան. . .»

1888. 12 օգոստոսի.



III.

Ծ Ա Ղ Ի Կ

Ուրախ փթթում են ծաղկունքը դաշտում,
Գիշերը նոցա ցօղն է զովացնում:
Իսկ ցերեկները պայծառ, անուշիկ
Ժպտում են ծաղկանց արևն ու երկինք:
Եւ զեփիւռն անուշ, թիթեռն ու մեղուն
Ծաղկանց հետ քաղցր զբոյց են անում:
Իսկ հայրենի դաշան ազատ, ընդարձակ
Շնչում է նոցա նոր ոյժ ու նոր կեանք:
Բայց ահա նոքա տեսնում են հեռվում
Խուլ, խաւար բանտի նեղ պատուհանում
Մեղմ օրօրվում է մի գունատ ծաղիկ,
Տխււր, միայնակ, որպէս խեղճ որբիկ:
Տխւրում են ծաղկունքն և աղերսագին
Կանչում են եղբօրն. «Եղբայր մեր անդին,
Սրի՛ դու մեզ մօտ. ի՞նչ ես մոռթ բանտում,
Որպէս խեղճ գերի հալվում ու մաշվում»

— Ո՛չ, ո՛չ, եղբայրներ անդին, պատուական,
Գերին տալիս է նոցա պատասխան.—
Թէպէտ ուրախ էք զուք ազատ դաշտում
Եւ վայելում էք գարնան սէր, խնդում,
Բայց չեմ նախանձում ես ձեր վիճակին,
Ձեւ թողնիլ ես իմ այս բանտը մթին:
Ծաղկեցէք զուարթ ձեր չքնաղ տեւքով,
Խնդացրէք սրտեր անհող անխռով...
Ես պիտի ծաղկեմ բախտազուրկ, անձար,
Դառն արցունք թափող թշուառի համար.
Ես պիտի ժպտիմ հէզ տառապեալին,
Որ կարօտում է հայրենի երկրին.
Ես սփոփանք եմ այս խաւար բանտում
Խեղճ բանտարկեալի, որ լոյս է խնդրում:
Թե՛ղ նա ինձ վերայ նայելով—ցիշե
Կանաչ հովիտներն իւր հայրենիքի:

1887. 11 մայիսի.



ՏԱՊԱՆԱԳԻՐ

Նա չէր նախանձում ոչ իշխանական
 Մեծապանծ անուան,
 Ո՛չ կարօտում էր հպարտ հարուստի
 Շլացնող փառքի:
 Նա չէր փափագում հզօր յաղթանակ,
 Դափնիք ու պսակ.
 Ո՛չ երազում էր գովեստ զղրգող,
 Արձան ու կոթող:

Ցրուել թշուառի տանջուած ճակատից
 Դառնութեան թախիծ.
 Եւ կանգնել պաշտպան իւր անմեղ, ընկձում
 Եղբօր իրաւանց—
 Այս էր տենչալի նորա ջերմ փափագ,
 Հոգւոյ նպատակ.
 Եւ զոհուած նա իւր ուխտին անսասան,
 Իջաւ գերեզման...

1889. 25 մայիսի.



* * *

(Օր. Սօֆիա Դ-ին.)

Սիրավառ սոխակն իւր անուշ երգով
 Սէր էր ներշնչում զեռաբոյս վարդին.
 Սիրահար երգիչն իւր անկեղծ քնարով
 Սէր էր նուիրում մատաղհաս կուսին:

Եկաւ վառ զարուհ—և վարդը ծաղկեց,
 Նորա ջերմ սիրով յագեցաւ սոխակ.
 Սնցան տարիններ... և կոյօր փթթեց,
 Բայց երգչի սէրը մընաց անպըսակ...

1888. 15 ապրիլի.



ԱՄԲԻՍԻՆ

...И толковала чернь тупая:
„Зачѣмъ такъ звучно онъ поетъ?
Напрасно ухо порожая,
Къ какой онъ цѣли насъ ведетъ?...“

Пушкинъ.

Ի՞նչ ես պահանջում, կատաղի՝ ամբոխ,
Դու ազատ երգչի անկեղծ քրնարից.
Ի՞նչ ես դու, որպէս չարանենդ ոսոխ,
Հալածում նորան՝ կուրացած կրքից:

Ի՞նչ ես պահանջում... Արդեօք ուղում ես,
Որ նա իւր սրտի խանդն ու զգացմունք
Զոհած հաճոյքիդ՝ երկրպագէ քեզ,
Եւ քո առաջն խոնարհի՞ իւր ծունկ:

Արդեօք ուղում ես, որ նա սրբազան
Իւր մաքուր երգը, որպէս մի վաճառք,
Փողոց հանելով՝ քրսու մեծատան
Դրուատէ՞ գործեր զազիր և անարդ:

Արդեօք ուղում ես, որ նա ստրկացած,
Որպէս անկեղու մի թշուառ զերի,
Խոնարհուի՞ այնտեղ, ուր գեանատարած
Դու ոտք ես լիզում բըռնաւորների...

Ո՛չ... ամբոխ խղճուկ, ամբոխ դու թշուառ,
Զուր են քո ջանքեր, ջրնորք—քո պահանջ.
Ե՞րբ ես դու տեսել, որ լոյսը պայծառ
Ընկձուկ, խորտակուկ խաւարի առաջ. . .

Ե՞րբ ես դու տեսել, որ երկրի կրծքից
Ուժգին դուրս ժայթքող հրրաբուխն անշէջ
Հանդչի գէթ վայրկեան հեղեղ-անձրևից,
Թէ անգամ նոքա տեղան միշտ, անվե՛րջ:

Ե՞րբ ես դու տեսել, որ գէպի երկինք
Անպախ սաւառնող հրվոր արծուին

Սարսեցնեն մըրիկ, որոտ, փոթորիկ,
Երբ նա լողում է ամպերի միջին... .

Օ՛, հաշտուիր ամբոխ, սիրի՛ր զու երգչին,
Ձեռք պարզել՛ր նորան զու մտերմութեան,
Նա քո առաջն կը բանայ ուղին
Բարւոյ, զեղեցկի և ճշմարտութեան...

1889. յունիս.




ԱՂՕԹԻՐ

Երբ խոռվալոյզ, դառըն մտքեր վրդովում են քո հոգին,
Եւ զգուանքով սկսում ես նայել մարդկանց ու կեանքին.
Երբ ընկղմուած դու վշտերի անհուն, անեզր ովկեանում,
Տառապում ես և յուսահատ մահուան հանգիստ աղերսում.
Երբ յանկարծ մի հոգեմաշ ցաւ ծանրանալով քո վերայ,
Քեզ թւում է՝ թէ այդ ցաւից էլ փրկուելու լոյս չըկալ... —
Դու անվհատ, ծունկ խոնարհած, աչքըդ երկինք ամբարձիր
Եւ լի յուսով, վառ հաւատով Տիրոջ անուանն աղօթիր...

Աղօթքի մէջ, հաւատն ինձ, դու կը գտնես ցանկալի
Անդորրութիւն, քաղցր հանգիստ յուզուած սրտի ու մտքի.
Աղօթքի մէջ քեզ կը ժպտեն, որպէս աստղեր լուսավառ,
Ե՛ւ սե, մռայլ կեանքը մարդկան, և՛ դառնալից այս աշխարհ.
Ջերմ աղօթքը որպէս աղբիւր պայծառ յուսով լի կեանքի,
Այրուած սիրտդ կը զովացնէ, կը տալ նոր ոյժ, նոր հոգի.
Ջերմ աղօթքը որպէս երկնից անմահ նուազ քաղցրալիր,
Քեզ կախարդած՝ կը վերացնէ մի այլ աշխարհ... Աղօթիր...

1890. 11 յուլիսի.



ԵԼԵԳԻԱ

Պարունն անցաւ... և դարնան հետ
Զքնաղ վարդը թառամեց.
Խեղճ սոխակն էլ իւր սիրաւէտ
Գողարիկ երգին վերջ տուեց:

Եւ պարտիզում կանաչազարդ,
Ուր տիրում էր կեանք եռուն,
Սյժմ՝ դունատ, որպէս հիւանդ,
Խուլ անքում է մերկ աշուն:

Էլ չի լսվում ոչ ճրվելոց
Անհոգ, անվիշտ ճնճղուկի,
Ո՛չ զեփիւռն է՝ առած իւր ծոց՝
Բերում մեզ բոյրն յասմիկի:

Սյդպէս, աւանդ, սիրտ իմ խղճուկի,
Անցաւ և՛ քո վառ դարուն,
Եւ քեզ պատեց վիշտը խեղդուկի,
Որպէս անկեանք, ցուրտ աշուն:

1889. 25 յուլիսի.

ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻՆ


25 ամեայ յօրելեանի առթիւ.

(1887 թ.)

Եթէ մի վերին, անյաղթ զօրութիւն
Ներշնչէր քո մէջ սիրտ դիւցազնական,
Հալածէիր դու անարգ բռնութիւն
Եւ անտէր աղգիդ կարգուէիր իշխան,—
Մի՞թէ դու ևս, որպէս նենգ Վասակ,
Խեղճ ազգըդ պէտք է տայիր ոտքի տակ...

Եթէ կոյր բախար քեզ ևս ժպտէր,
Դառնայիր դու հայ կրեսոս մեծատուն.
Անթիւ գանձերիդ աշխարհ նախանձէր,
Եւ ամենուրեք թնդար քո անուն,—
Մի՞թէ դու ևս պէտք է շուռ գայիր
Եւ աղքատ, թշուառ ազգըդ ատէիր...

Բայց ոչ... ով ազգիս քաղցրախօս երգիչ,
 Դու մի պարզ էակ ծնար այս աշխարհ.
 Դու ծնար պոյետ—սիրոյ քարոզիչ.
 Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար:
 Եւ հնչեց քրնարիդ ազատ, համարձակ,
 Նա ողևորեց մեր սիրտն ու հոգին.
 Եւ ահա այսօր յարատեւ քեզ կեանք
 Բարեմաղթում է քո ազգի որդին:



Մ Ո Ւ Ս Ը

Դարձեալ նոր երազ և նոր ցնորքներ...
 Ահա հրձիւում է իմ մատաղ հոգին.
 Շտապի՛ր, ով Մուսա, քո սրբբանուէր
 Համբոյրը դրոշմել երգչիս շրթունքին:

Շտապի՛ր... ժրպիտըդ այրող, կախարդիչ
 Թող վառէ սիրտըս հրրով սրբազան,
 Թող ոգի շնչէ հայեացքըդ դիւթիչ.
 Ես կամիմ երգել հրաշքներ զարնան...

Թող որպէս անոյշ զեփիւռ քաղցրաշունչ,
 Քո թովիչ ձայնը հնչէ աւանջիս
 Եւ յուսոյ տաղեր, և՛ սիրոյ մրմունջ.
 Ես կամիմ երգել տենչանքը սրտիս:

Ես կամիմ երգել անվերջ քաղցրութիւն
Մի նոր, ոսկեյոյս և խաղաղ կեանքի.
Ես կամիմ երգել սիրոյ սրբութիւն
Եւ վսեմ փայլը անկեղծ վաստակի:

Ես կամիմ երգել, երգել յարատե,
Որպէս թռչունը ազատ եթերում.
Օ, շտապի՛ր, Մուսա, թռի՛ր սրաթեւ,
Քանի երազը չի ցնդել օդում. . .

1888. 9 փետրուարի.



ԼԵՐՄՕՆՏՈՎԻՑ

Ի.

* * *

Սուրբ տաճարի դռան առաջ
Հիւանդ, մաշուած, սովատանջ
Ըսպասում էր ողորմութեան
Մի տառապեալ մոլորացկան:

Վշտահայեաց ու լալաղին
Նա լոկ հաց էր աղերսում,
Բայց ծաղրելով մէկը խեղճին՝
Մի քար դրեց նրա ձեռքում:

Սյդպէս և ես տանջուած վշտից,
Խնդրում էի քեզնից սէր,
Բայց դու, աւանդ խաբելով ինձ՝
Խորտակեցիր իմ յոյսեր. . .

1887. 15 մարտի.



ՏԱՊԱՆԱԳԻՐ

Պարզասիրտ որդին վեհ ազատութեան
Զգացմանց համար կեանք չէր խրնայում,
Եւ ճշգրիտ պատկերն ազատ բնութեան
Նա կենդանադրել յաճախ էր սիրում:

Նա հաւատում էր մութ գուշակութեանց,
Հաւատում սիրոյն, թիլիսմաններին.
Եւ նա զօհ բերեց օրերն իւր կենաց
Շատ անբնական ցանկութիւններին:

Վշտի, կրքերի և երջանկութեան
Նորա մէջ հոգին պահում էր պաշար.
Փչեց նա շունչը: Ահա՛ գերեզման:
Մարդկանց համար չէր նա եկած աշխարհ:

1887. 26 յունուարի.



ԶԱՌԱՆՅԱՆՔ


(Ուլանդից.)

Ո՞վ արդեօք անոյշ, մեղմ նուազներով
Հալածեց աչքիցս պայծառ տեսիլներ.
Օ՛, մայր իմ, նայի՛ր, ո՞վ է երգելով
Այսպէս տարածամ բախում մեր դռներ:

«Ձեմ տեսնում այստեղ ես ոչ մի էակ,
Քնի՛ր, իմ չքնաղ, քնի՛ր, իմ անգին...
Եւ հաւատն ինձ, իմ հիւանդ զաւակ,
Որ լուռ է երկիրն այս խաւար ժամին»:

—Բայց երկրային չեն, մայր իմ, այդ ձայներ.
Նոքա հնչվում են այնպէս անուշիկ...
Ա՛խ, այդ երգում են սուրբ հրեշտակներ,
Եւ ինձ են կանչում... Մնաս բարեւ, մայրի՛կ...

1888. 3 հոկտեմբերի.



ՍԻՐԱՍՈՒՆ ԾԱՂԻԿ

(Մօրից Հարստմանից.)

Ես իմ սիրած չքնաղ ծաղկին նայեցի
Եւ իմ աչքին բացուեց դիւթիչ մի աշխարհ.
Տեսայ հովտում սպիտակ տնակ հայրենի,
Շուրջը փռուած մարգագետին ծաղկավառ:

Եւ ես նստած այդ տնակի դռան մօտ,
Գրվում էի կրճքիս սեղմած մանուկին.
Իսկ դու իբրեւ զաւակատէր հայր զթոտ,
Ժպտում էիր, ո՞վ իմ անգին ամուսին:

Բայց ահա նա՝ թօշնեց խղճուկ իմ ծաղիկ,
Ո՛հ, էլ զո՛ւր եմ դարձեալ նայում ես նորան...
Ել չեմ գտնիլ ես այդպիսի քնքուշիկ
Մի այլ ծաղիկ—նա չքնաղ էր, անմեման...

1889. 10 հոկտեմբերի.



ԱՌԱՌՈՏԵԱՆ ԵՐԳ

Ե՛ւ այսօր փայլեց առաւօտս ուրախ,
Ես ողջունեցի դարնան արշալոյս.
Ձեռք առայ քննար՝ երգելու անվախ
Քաղցր զեղմունքը սիրահար հոգոյս:

Եւ ինձ իւր անշէջ, դիւթիչ հայեացքով
Նորից փաղաքշեց կենսատու արեւ.
Սլացաւ զեփիւռն ականջիս մօտով
Եւ ես լսեցի. «բա՛րե քեզ, բա՛րե...»

Եւ թռչունների անթիւ երաճներ
ձախրելով շուրջըս՝ ինձ աւետեցին
Նորից քաղցր լոյս, քաղցր երազներ,
Եւ պայծառ վիճակ իմ մատաղ կեանքին:

Հրճուիր դու ազատ, սիրտ իմ սիրավառ,
Վայելի՛ր կեանքի բուռն քաղցրութիւն.
Հրճուիր, քանի քեզ ժպտում են պայծառ
Ե՛ւ անամպ երկինք, և՛ ճոխ բընութիւն...

Անվերջ է գարուն... Կրգայ ցուրտ ձմեռ,
Կըթօշնի վարդը, կըլուի սոխակ.
Եւ այնուհետեւ մնա՛ք բարեաւ և՛ սէր,
Ե՛ւ անվերջ գգուած ցընորք ու տենչանք...



ԾԱՂԻԿՆԵՐ ԵՒ ԻՂՁԵՐ

Եւ՛ն ծաղիկներ ազատ փթթող
Կանաչավառ պարտիզում:
Կան և իղձեր արիւն յուզող
Մարդու սրտի խորքերում:

Ծաղիկները անոյշ բուրմամբ
Կեանք են շնչում պարտիզին.
Վառ իղձերն էլ միշտ թարմութեամբ
Լի են պահում մեր հոգին:

1890. 15 ապրիլի.



ՄԵՌՆԱՅԻՆ ԳԻՁԵՐ

Սպիտակ սաւանով ծածկուել է գետին,
Դառնաշունչ քամին փչում է կատաղած.
Նայում եմ վերեւ—չի փայլում լուսին.
Մառախուղով է երկինքը պատած:

Նայում եմ շուրջըս—վշտալի՜ պատկեր.
Ամեն ինչ ճնշուած ձմրան ճանկերում,
Տնքում, հեծում է և խուլ մրմունջներ
Անվերջ հնչվում են իմ ականջներում...

Մերթ ես լսում եմ մի դառն հեծեծանք,
Մերթ խորին հառաչ չարատանջ սրտի...

Մերթ իմ ականջին զարնվում են արագ
Լաց, կոծի ձայներ անմեղ զոհերի...

Ճնշվում է սիրտս... Եւ ահա՛ յանկարծ
Ինձ պաշարում են դառնալից մտքեր...
Եւ ի՜նչ եմ տեսնում աչքիս նկարուած,
Օ, Տէ՛ր իմ, որքան տխուր պատկերներ...

Ահա՛ մերկանդամ, հարստահարուած
Մի ծեր մուրացկան՝ զուրկ օթեւանից,
Ծանր տնքում է ձիւնի մէջ թաղուած,
Եւ աղի արցունք թափում աչքերից:

Ահա՛ մի այլ տեղ, մի խուլ անկիւնում
Կիսամերկ որբը խեղճ, անտիրական,
Ցրտից փետացած «վայ մայր» է կանչում
Եւ դողում, որպէս տերեւ աշնան:

Ահա՛ գետնափոր, մութ կացարանում,
Ուր օղն է խոնաւ, սառը, մահաշունչ,
Քաղցած ու անտէր հեծում է մահճում
Մայրը որդոյ հետ հիւանդ, կիսաշունչ...

Եւ չըկայ անկիւն, ուր հանգիստ տիրէր.
Ամեն տեղ տանջանք, ամեն տեղ սոճի, լնց,
Ամեն տեղ անգութ աշխարհի զոհեր
Զար մարդկութիւնից ճնշուած, հալածուած...

1887. 2 փետրուարի.




ԵՐԳ ԵՒ ՄԵՏԸՂ

Երգիչը քեզ երգ նուիրեց,
Մեծատունը—իւր ոսկին.
Երգիչը քեզ «կեանք» անուանեց,
Մեծատունը— «սիրուն կին»...

«Տուր ինձ ձեռքըդ»—հարուստն ասաց—
«Իմ ողջ զանձըս քեզ պարգև».
Իսկ երգիչը սիրուց տանջուած՝
Միայն ողբաց քո առջև...

Բայց դու, զաւակ փարթամ կեանքի,
Երգչի երգը մերժեցիր,
Եւ քո սիրտը ժանդ-մետաղի
Խաւար փայլին զոհեցիր...

1889. 8 ապրիլի.



ՀԱՍԱՐԱՆՑ ՄՁԱԿՆ

Թէ քո կրճքում բարախում է
 Հողի անկեղծ, անկաշառ,
 Եւ քո սիրտը միշտ ձգտում է
 Դէպի բարին ու արդար—
 Զուր է յուսալ, զործի՛չ ազնիւ,
 Այս աշխարհից անկեղծ վարձ.
 Դու չես գտնիլ յարգանք, պատիւ,
 Եւ ոչ հանդիստ քո խնդրած:

Թէ կոչուած ես դու կեանքի մէջ
 Մի նոր շաւիղ հարթելու,
 Շաւիղ դէպի լոյսը անշէջ,
 Դէպի արեւ կենսատու—
 Դու մի՛ յուսալ, չարքաշ մշակ,
 Սուրբ վաստակիդ հատուցում.
 Մարդկանց աչքում ծաղը է—ծանակ
 Ամեն մի վեհ զգացում...

Բայց թէ քո մէջ չըկայ անկեղծ
 Սէր դէպի մի վսեմ՝ զործ.
 Աւերիչ ես, որպէս մի ցեց.
 Թու՛նաւորող—որպէս օձ:
 Թէ պատրաստ ես դու նենգ խօսքով
 Պաշտպան կանգնել բռնութեան.
 Մերձաւորիդ փոս փորելով՝
 Մատնել նորան դառն անկման...

Յուսա՛, ո՛վ մարդ, և լիայոյս
 Դու քեզ խնդրիր դափնիներ.
 Դարուս ոգին անտարակոյս
 Կարգարայնէ քո յոյսեր...
 Կը վայելես դու փառք, հռչակ,
 Սեւ զործերիդ դրօշաւատում.
 Եւ իբր յաղթող—կը կրես պսակ
 Դու այս խարդախ աշխարհում...

1887. 6 օգոստոսի.




ՍԻՐՈՅ ՎԻՇՏ

Որպէս վառ կոկոն քաղցրաբոյր վարդի,
Նոր փթթում էիր կեանքի ծաղկոցում,
Երբ հեղ հայեացքդ շնչեց ինձ հոգի
Եւ սիրոյ կայծը վառուեց իմ կրծքում:

Եւ այդ բուսկից ես ջերմ, յուսալի
Քանի՜ անկեղծ երգ քեզ նուիրեցի.
Ո՛հ, քանի՜ անգամ, մանուկ սիրիլի,
Ձերմ արտասուքով կուրծքդ թացեցի... .

Բայց երբ քեզ ժպտեց պայծառ արշալոյս,
Նոր դարնան արեւ դու ողջունեցիր.
Աւաղ, խեղճ երգչիս... խորտակուեց իմ յոյս...
Դու մաքուր սէրըս ծաղրի մատնեցիր... .

1888. 30 մայիսի.



ԴԵԽԱՃԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՂ

(Իմ վաղամեռ ընկեր Յ. Բարաջանեանի յիշատակին.)

Աւաղ, դու մեռար, թանկագին ընկեր,
Բայց մեռար, որպէս մի զոհ չարատանջ.
Ո՛հ, ինչո՞ւ խաբուած՝ դու սիրանուէր
Բացիր քո սիրտը ամենքի առաջ... .

Ինչո՞ւ մանկական անկեղծ հաւատով
Դու ձեռք պարզեցիր դաւաճաններին,
Եւ եղբայրական անձնազոհ սրտով
Համբոյր դրոշմեցիր չար շրթունքներին... .

Ինչո՞ւ չարանենդ խաբեբայութեան
Դու զոհ բերեցիր քո սուրբ խորհուրդներ...
Եւ քսու մարդկանց կեղծ մտերմութեան
Դու ընծայեցիր և՛ հաւատ, և՛ սէր:

Մի՞թէ ծանօթ չէր քեզ այս բիրտ աշխարհ,
 Սյս անվերջ ծովը դառնութիւնների,
 Ուր աղատ միտքը, աղատ գաղափար,—
 Ո՛ղջը զոհուած է զաղեր կրքերի . .

Ուր ստրկութիւնը, որպէս կռու շղթայ,
 Խեղդում է և՛ սիրտ, և՛ վեհ ձգտումներ,
 Ուր սե նենգութեան թոյնը անխնայ
 Մարդկային կեանքը դարձնում է աւեր:

Ուր չկայ անկեղծ ո՛չ մտերմութիւն,
 Ո՛չ բուռն ձգտում անձնագոհութեան,
 Ուր անարգուած է սուրբ ճշմարտութիւն,
 Եւ փառքը շեջած առաքինութեան . .

.

1888. 25 մարտի.



* * *

Ճերի՛ք է որքան բախտը խաբուսիկ
 Չքնաղ վարդերով սփռեց իմ ուղին.
 Որքան ջերմ սիրոյ երազներ զողարիկ
 Անյոյս յուզեցին իմ մատաղ հոգին:

Նոյա ծաղկալեց, անհոգ վայելքին
 Ահա՛ տալիս եմ իմ վերջին բարե,
 Եւ նոր ողջոյնով փշալեց կեանքին
 Իմ երգն ու սիրտը բերում եմ պարզե:

1890.



Ե Ր Գ Ե Ր

(Հայնէից)

I.

Գիշեր ցերեկ միայն դու ես
Ուշք ու միտքս զբրաւած,
Հեզ աչերով, մատաղ ժպտով
Սիրտս ու հոգիս կախարդած:

Ա՛խ, ինչպէս ես կը ցանկայի
Մենակ նստած քո կողքին
Ողջ գիշերներ քեզ իմ երգով
Պատմել սէրըս, իմ անգի՛ն:

Եւ կուգէի քո քնքուշիկ
Ձեռքը սեղմել շրթունքիս,
Եւ ջերմաջերմ իմ արցունքով
Թրջել նորան, նազելիս:

1889. 21 յունուարի.

II.

Գետափին բուսած շուշանը հեղեկ
Քաղցր հայեացքով նայում է երկինք.
Իսկ վառ լուսինը՝ սիրահար, արտում
Նորան իւր պայծառ համբոյրն է զնկում...

Բայց ահա նորից շուշան-նազելին
Ամօթով աչքը դնում է ջրին.
Սակայն և՛ այնտեղ լուսինը նորան
Տխուր ժպտում է, որպէս ուրուական...

1889. 8 սեպտեմբերի.

III.

Երկար շողում էր այս մռայլ կեանքում
Ինձ նազելիս պատկերն աննման.

Բայց նա չքացաւ—և խօլ խաւարում
Ես մնայի դարձեալ խեղճ թափառական:

Որպէս մանուկը մոլթը տեղ ընկած
Բարձր երգում է, գոռում է ուժգին,
Որ գոնէ երգով՝ իրեն պաշարած
Յրուէ երկիւղը, հանգիստ տայ սրտին.

Ո՛հ, այդպէս և ես—մանուկ խղճալի,
Անվերջ երգում եմ խաւարի միջում.
Գուցէ և երգըս չէ զուարճալի,
Բայց նա իմ սրբաի թախիժն է յրվում:

1888. 28 նոյեմբերի.

IV.

Դու մանուկ չքնաղ, եղե՛մ ծագկալից,
Որքան քնքոյշ ես, որքան սիրասուն.
Նայում եմ վերադ—և հոգիս նորից
Զգում է նոր կեանք, նոր երջանկութիւն:

Այս, ինչպէս սիրով այդ փոքրիկ զըլխիդ
Զեռքերըս դարսած՝ ես ջերմ, սրբաեռանդ
Աղօթք կ'անէի, որ Տէրը քեզ միշտ
Պահպանէր այդպէս մաքուր, անարմատ:

1888. 8 հոկտեմբերի.

Ահա նա—անկող կաթիլն արցունքիս,
Դարձեալ յայտնուեցաւ նա աչքիս միջում...
Ո՛հ, միայն նա է ճշում խեղճ հոգիս,
Եւ պարզ հայեացքս նորից պղտորում:

Նա անտես մընաց իւր ընկերներին—
Նոքա չքացան անգամ, յաւիտեան...
Ձբացան որպէս վշտեր դառնազին—
Նոցա չորացրեց քամին գիշերուան:

Եւ այն աստղերը այնքան վառ, չքնաղ,
Որ այնպէ՛ս սիրով, այնպէ՛ս քաղցրաւէտ
Ինձ բաշխում էին և՛ վիշտ, և՛ ծիծաղ,
Աւանդ, նոքա էլ չքացան անհետ:

Եւ սէրըն անգամ, սէրըս կենսատու
Վաղուց հանգել է իմ սառած սրտում:
Օ՛, շտապի՛ր, կաթի՛լ, շուտ արա և դ՛ու
Ընկերներիդ պէս չքացիր օդում...

1889. 19 օգոստոսի.

Որպէս երբեմն գիշերուայ ժամին
Հուսնի ջինջ շողքը գողում է ջրում,
Իսկ լուսինն ինքը երկնի երեսին
Հանգի՛ստ ու վսե՛մ յառաջ է սահում:

Այդպէս իմ առջև և՛ դու, նազելի,
Հանգիստ, սիզաճեմ քայլ էիր փոխում,
Եւ քո պատկերը չքնաղ, պաշտելի
Անդրադառնում էր սրտիս խորքերում...

1889. 9 յունուարի.

VII.

(Նմանողուններն.)

Այս աշխարհին, ո՞վ նազելիս, դու մի՛ հաւատար,
 Նորա բոլոր խորհուրդները խաբդախ են ու չար.
 Նա ծաղրում է քո կուսական պատկերը սիրուն,
 Պարսաւում է մատաղ սըրտիդ թերերն զգայուն:

Այս աշխարհը, իմ աննման, կոյր է ու անմիտ,
 Նա չէ կարող գնահատել քո լացն ու ժըպիտ.
 Նա ի՞նչ զիտէ, քո մի քնքոյշ, ջերմ համբոյրի մէջ
 Որքան սիրոյ հուր է եռում—հուր պայծառ, անշէջ...

1889. 30 մայիսի:

VIII.

Նոքա իմ կեանքը հալումաշ արին,
 Անխնայ տանջեցին իմ խղճուկ հոգին—
 Ոմանք իրենց կոյր, անվերջ նախանձով,
 Ոմանք դատարկ սէր ինձ պարզեցելով:

Նոքա իմ հացը թոյնի փոխեցին,
 Խըմած ջըրիս հեռ լեղի խառնեցին—
 Ոմանք իրենց կոյր, անվերջ նախանձով,
 Ոմանք դատարկ սէր ինձ պարզեցելով:

Բայց նա, ո՞վ ողջից առաւել մաշեց
 Իմ սիրտն ու հոգին, կեանքս աւերեց,
 Նա երբէք սիրոյս չեղաւ սիրակից,
 Եւ ոչ էլ նախանձ ըզգաց դէպի ինձ:

1887. 8 մարտի.

IX.

Մանուկ, մի լինիր այդպէս անհամբեր,
Եւ ների՛ր, որ դու իմ նոր երգերում
Անվերջ լսում ես հին վշտի ձայներ,
Եւ միայն անցեալ տանջանքս ես կարդում:

Սպասի՛ր, հոգեակ. կրլուէ շուտով
Նախկին վշտերիս ախուր արձագանք,
Եւ սիրտըս նորից քեզ ջերմ եռանդով
Կ'երգէ նոր զարուն, նոր սէր ու նոր կեանք:

1889. 12 յունուարի.



ԱՌԵՔԵԱԼ

Խօսի՛ր, առաքեալ վեհ ճշմարտութեան,
Քանի չեն փակուել քո սուրբ շրթունքներ.
Անարգի՛ր «եսը» զոռոզ մարդկութեան,
Հարուածի՛ր անխնայ նորա չար գործքեր...

Թո՛ղ նա կատաղի, որպէս փոթորիկ,
Կարկուտ ու հեղեղ թափէ քո վերան,
Դու այդ համարիւր մի անզօր ալիք,
Եւ ազատ քայլէ՛ քո փշոտ ծամբան...

Մարանչի՛ր անվախ, որպէս քաջ զինուոր,
Անկաշառ խօսքի դրօշակը ձեռքում.
Եւ մի՛ վհատիր, թէ դու էլ մի օր
Պիտ ընկնես կեանքի դու պատերազմում:

Այո՛, դու կընկնես—և քո անշունչ զին
Մայր-երկրի կրճքում փռի կըզառնայ,
Բայց քո վեհ քարոզ, քո հպարտ հոգին
Յաւիտեան կապրեն աշխարհիս վերայ:

Եւ անվերջ դարեր քո հրդօր բարբառ
Կըհնչուի ազատ, ահեղ թնդիւնով.
Նա կըխորտակէ մահաշունչ խաւար,
Մեզ անշէջ լուսոյ տաճար կանգնելով...

1889. 1 փետրուարի.



* * *

Սիրելի ես, նուիրական դու իմ քաղցրը հայրենիք,
Քո սուրբ ծոցում անցուցել եմ ես շատ օրեր երջանիկ.
Քո երկինքը անամպ, պայծառ, քո դաշտերը ծաղկաւուն
Ինձ շատ անգամ ոգևորել, կեանք են շնչել իմ հոգուն:

Սիրելի էք և դուք կուսանք իմ հայրենի աշխարհի,
Դուք նազելի, հըրապուրիչ, չքնաղ դստերք հարաւի.
Ես շատ անգամ սիրականիս սրբոտիս սէրը երգելով,
Ե՛ւ ձեր սէրն եմ ես հիացած՝ փառաքանել իմ երգով:

Թող ես այժմ քաղդահալած՝ երկրէ երկիր Թափառեմ,
Թող ես այժմ սիրուց զրկուած՝ օր ու գիշեր արտասուեմ,
Դուք ինձ համար դարձեալ քաղցր էք և միշտ քաղցր կը մնաք,
Օ՛, հայ աշխարհ—իմ հայրենիք և դուք չքնաղ հայ կուսանք:

1890. 10 յուլիսի.
ՄՈՍԿՈՒՍ.



ԲՆՈՒԹԵՆ ԳՐԿՈՒԹ

I.

Սքանչելի պատկեր: Կանաչ պարտիզում
 Ո՛հ, ինչ ոգելից շարժումն է տիրում,
 Ամեն ինչ ծաղկած, ամեն ինչ փթթած,
 Նոր կեանք է շնչում: Եւ ես ներշնչուած
 Անխօս դիտում եմ այդ կախարդական
 Կենդանութիւնը գեղազարդ զարնան:
 Ահա փրչում է զեփիւռ հովասուն,
 Երգում է սոխակ, և նրա զգայուն,
 Սիրալից ձայնը, կարծես թէ մագնիս,
 Դէպ ինքն է քարշում միտքս ու հոգիս...

Բայց միայն ես չեմ ականալիշ այդպէս
 Լսում սոխակին:—Ո՛չ, ամբողջ պարտէզ
 Կախարդուած նորա երգից ոգեշունչ,
 Լսում է նորան, լսում անմրուունչ...

II.

Ահա ժպտում է և՛ ծաղիկների
 Վսեմ թագուհին—վարդը նազելի,
 Եւ նորա դէմքին չքնաղ սիրալիւր
 Կարծես կարդում եմ. «Պատանի՛, նայի՛ր,
 Այն իմ ժըպիտն է, ժըպիտ կուսական
 Ոգի ներշնչել երգչին բընութեան.
 Այն իմ հայեացքն է՝ անարատ, պայծառ,
 Որին նա վառուած՝ ձօնում է քընար»:
 Նայում եմ շուրջըս—ա՛ջ, ձա՛խ, յե՛տ, առա՛ջ
 ձօճում են ծառեր, ծփում է կանաչ.
 Եւ մանիշակը հեղ, կապուտաչիկ
 Ժպտում է թագուն: Բացուել է յաամիկ,
 Բացուել են դալար ծաղկալից թփեր
 Եւ շուրջ տարածել հովասուն ստուեր:

III.

Անվերջ տեսարան... Առաջ եմ գընում,
 Եւ որքան առաջ, նոյնքան իմ սրտում
 Բոցավառվում են սրբազան կայծեր...
 Ես աղօթում եմ. և Հոգոյս լարեր
 Ազատ հնչելով՝ Մեծ Բարերարին
 Փառաբանում են երգով սրտազին...
 Բայց ահա ինձ հետ և՛ օդասլաց
 Երգում են թռչունք: Նայեցէ՛ք նորանց,
 Տեսէ՛ք որպիսի՜ անխարդախ սիրով
 Եւ քաղցրահնչուն մեղեդիներով
 Նոյնպէս օրհնում են Արարչի անուն.
 Եւ երկնքիցը յաւէտ վառվռուն
 Լուսոյ աղբիւրը սփռելով շողեր,
 Ոսկեղօծում է այդ գիւթիչ պատկեր:

IV.

Հրձկում է Հոգիս... Բայց, աւանդ, յանկարծ
 Տխրութեան ամպեր իրար կուտակուած՝
 Ծածկում են աչքիցս այդ անպատմելի
 Սրբազան պատկեր—պարզեն Արարչի.

Ծանր զգացմունք է պաշարում Հոգիս,
 Այլ պատկերներ են նկարվում աչքիս...
 Մինչդեռ բընութեան լայնարձակ գրկում
 Փոխադարձ սուրբ սէր և կեանք է եռում,
 Մարդկային կեանքը... օ, Արարի՛չ Տէր,
 Որպիսի՜ տխուր, դառն Հակապատկեր...
 Բռնութի՛ւն, կապա՛նք, ո՞խ դժոխային
 Ճնշում, խեղդում են կեանքը մարդկային...
 Եւ ո՞ւր է անկիւն այս չար աշխարհում,
 Ուր թոյլն, անզօրը չի հարստահարվում... .

1888. 5 ապրիլի.



ՆԵՆԳԱՌՈՐԻՆ

Քանի քո շուրջ տղիտուլթեան
Դեռ տիրում է խօլ խաւար,
Քանի լոյսը ճշմարտութեան
Դեռ հալածվում չարաչար,—
Քո զիմակը զըժօխային
Միշտ կը փայլէ, կը շողայ,
Եւ չարանենդ քո սեւ հողին
Աչքից անտես կը մնայ...

Բայց երբ կը գայ ցանկալի օր
Պայծառ լուսոյ յաղթութեան
Եւ խաւարը էլ քեզ հըզօր
Ձի լինիլ զէնք ու պաշապան,—
Այն ժամանակ, ով նկնգամիտ,
Կը մերկանան մեր աչքին
Եւ զիմակը զազիր զէմքիդ,
Եւ քո խաւար, սեւ հողին...

1890. 7 մայիսի.

ԿԷՍ ԳԻՇԵՐ

Կէս գիշեր է, մռայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մտածում եմ—և բիւր վշտեր սիրտս ու հոգիս են մաշում.
Մտածում եմ—շուտով արդեօք դու արշալոյս ոսկեվառ,
Կը հալածես երկրին տիրած դժնատեսիլ այս խաւար...

Բայց մռայլը գիշերային, մռայլ Թա՛նձր, անժափա՛նց
Ամենուրեք, ամենայն տեղ իւր Թեւերն է տարածած.
Եւ տխուր է մայր-երկիրը, տխուր որպէս սգաւոր,
Նա տանջվում է խաւարի մէջ՝ կարօտ օրուան լուսաւոր:

Տխուր է և՛ իմ խեղճ հոգին, մռայլ որպէս այդ գիշեր,
Նորան հալում ու մաշում են ազգիս ցաւերն ու վշտեր...
Եւ նա տանջվում, տառապում է մայր-երկրի պէս ցաւազար,
Խղճով ազգիս աղերսում է նա երկնքից օր պայծառ...

Կէս գիշեր է, մռայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մայր-երկրի հետ և ես տխուր լոյս օրուան եմ սպասում...
Օ՛հ, հանդարտուիր, դու խեղճ երկիր և դու սիրտ իմ խոռվայոյզ,
Ահա մըռայլն հալածվում է... քաջայաղթ է արշալոյս...

1890. 5 մայիսի.

Ս Օ Ն Ի Տ

Ո՛չ, ես չեմ ուզում, ո՛վ կոյս գեղեցիկ,
Որ դո՛ւ էլ տանջուես սիրոյ վշտերից,
Եւ երկբայութեան յուզե՛չ փոթորիկ
Դառն արցունք քամէ և՛ քո աչիւրից:

Ձեմ ուզում, հոգեակ, տեսնել քո պայծառ
Ոսկի յոյսերը անհետ չքացած.
Եւ մատաղ սէրը՝ խեղճ, փոթորկահար
Դարնան ծաղկի պէս ոտքի տակ ընկած:

Օ՛հ... համր է սիրտըս քեզ սէր երգելու,
Դու տանջուած երգչիս տո՛ւր մոռացութեան,
Եւ այդ ջերմ սէրը քո մատաղ հոգու
Դու զոհ բեր խղճուկ ազգիդ փրկութեան...

Եւ թո՛ղ իմ երգում դու ապրես, հոգեակ,
Իբրեւ մի վըսեմ դործի նահատակ...

Ո Ր Բ Ե Ր

Մի՛ լար, քոյր իմ, դառն արցունքով
Եղբորդ սիրտը մի՛ պրիլ,
Մեր խղճուկ մօր դու լաց, սուգով
Նորից կեանք չես պարգևիլ:

Անգութ մահը նորան անդարձ
Խըլեց մեղնից յաւիտեան,
Եւ մեզ սիրող մօրից զրկուած՝
Թողեց անտէր, անպաշտպան:

Բայց դու մի՛ լար... քոյր իմ անգին,
Յիշի՛ր մեր մօր այն խըրատ,
Որ նա մահուան տխուր ժամին
Մեզ կըտակեց, իբր աւանդ:

«Սիրէ՛ք միմեանց»—նա մեզ ասաց—
 «Անպէ՛րջ սիրով, ի՛մ որդիք,
 Սիրէ՛ք անկեղծ ու անձնուրաց,
 Որ միշտ լինէք երջանիկ»:

Մի՛ լար, քոյր իմ... այսուհետեւ
 Թո՛ղ այդ սէրը կեանքի մէջ
 Լինի մեզ մայր, թիկունք ու թև.
 Նա մեր ցաւին կը տայ վերջ...

1888. 4 օգոստոսի.



Ա Ղ Օ Թ Ք


Սմեն անդամ, երբ լսում եմ
 Ես թշուառի սուգ ու լաց,
 Քեզ ծնկաչոք աղօթում եմ,
 Ո՛վ դու մեր Հայր, մեր Աստուած:

Աղօթում եմ ես ջերմագին,
 Աղօթում եւ արտասովում...
 Իմ աղօթքով ես աշխարհին
 Քեզնից սէր եմ աղերսում:

Սէ՛ր մեծազօր, սէ՛ր յաղթական,
 Ոխ, չարութիւն խորտակող.
 Սէ՛ր փոխադարձ, եղբայրական,
 Մարդկանց ամուր շաղկապող:

Սէ՛ր եմ խնդրում, ո՛վ Արարիչ,
 Քար սրտերը հալեցնող...
 Սէ՛ր փրկարար, սէ՛ր սփոփիչ,
 Հէզ, թշուառին կեանք տուող...

1889. 13 օգոստոսի.



ՐՕՐԵՐՏ ՊՐՈՒՏՅԻՅ

I.

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ

Երբ վաղորդեան մեղմիկ քամին օդն է տատանում,
Զքնաղ, մատղաշ ձկնորսուհին ծովափն է վազում,
Եւ տեսնում է ալիքներից այնտեղ դուրս նետուած
Փայլուն աղներ, մարգարիտներ աւազում թափուած:

Նա հրճվում է որպէս մանուկ և լի բերկրանքով
Զարդարում է իւր հագուստը գաած գանձերով.
Մարգարտաշար օղակներով մազերն է հիւսում
Եւ իւր ընկեր աղջիկների նախանձը շարժում:

Եւ նա անհոգ՝ չի մտածում թէ այդ րոպէին,
Երբ գանձեր էր նորան բաշխում կատաղի քամին,

Որքան մատաղ նա էակներ կենդանի կլանեց,
Որքան նաւեր յուզուած ծովի յատակն ուղարկեց:

Ընդունիր, հիվ նազելիդ իմ, և՛ դու սրտաբաց
Յուզուած երգչիս ջերմ երգերը—բեղ նուէր բերած.
Եւ որպէս այն ձկնորսուհին, մոռացիր դժւ էլ,
Որ մըրիկն է սրախ խորքից նոցա դուրս խլել...

1889. 19 օգոստոսի.

II.

ՓՈԹՈՐԿԻՑ ՅԵՏՈՅ

Դու շատ տանջեցիր ինձ քո նենգ խաղով,
 Օ, չար փոթորիկ դառնաղէտ կեանքի...
 Բայց ահա ղյժըդ ես խորտակելով՝
 Պատրաստ եմ արդէն նոր պատերազմի:
 Ահա փռում եմ թւերըս յողնած,
 Թնդեցնում դարձեալ հին երգըս ուժգին.
 Այո, իմ սիրտը դեռ չէ փրշրուած,
 Դեռ քաջ, արթուն են ղյժերըս նախկին:

Ես չեմ ափսոսում, որ ցաւեր անվերջ
 Դուրսս պատեցին ճերմակ մաղերով.
 Ի՞նչ փոյթ... Միայն թէ կրակներիս մէջ
 Հոսէ տաք արիւն, հոսէ եռալով.

Եւ ես երբեմն զլուխ եմ խոնարհած,
 Բայց երբէք հոգով ես չեմ ստրկացել.
 Ո՛չ, դեռ բազուկիս ղյժը չէ հատած,
 Դեռ նա կարող է սուր, զէնք խաղացնել:

Տարիքն անզօր են հայեացքըս պայծառ
 Պղտորել վշտի դառն արտասուքով...
 Զահի՛լ է նա միշտ, զուարթ ու կայտառ,
 Ով մի վեհ դործի ձգտում է հոգով:
 Բայց թէ նորից բախտն ինձ դաւաճանէ,
 Խըլէ ձեռքիցըս պսակն յաղթութեան,
 Թող կեանքի կռվում ես ընկնեմ, փոյթ չէ,
 Միայն թէ ընկնեմ հերոսի նման. . .

1889. 19 օգոստոսի.



ԵՐԿՈՒ ՎԱՐԳ

(ՄԱՅՍ ՎԱԼԴԱՌԻՑ.)

Տխուր, գունատ երկու վարդեր ահա ընկած չոր գետին,
Վշտատոջոր, լուռ նայում են զարնան չքնաղ արևին.
Իսկ արևը մայր մտնելով, ոսկի ժպիտը դէմքին,
Վերջին անգամ փաղաքշում է խղճուկ, Թօշնած վարդերին:

— Ինձ մատաղհաս չքնաղ հարսը փայփայում էր իւր կրծքին,
Երբ երջանիկ և անսահման սիրով լի էր նրա հոգին:

— Ինձ խեղճ փեսան պոկեց լալով դառն անջատման ըոպէին
Հարսի կրծքից, երբ նա արդէն փչել էր մատաղ իւր հոգին:

Տխուր, գունատ երկու վարդեր ահա ընկած չոր գետին,
Վշտատոջոր, լուռ նայում են զարնան չքնաղ արևին.
Իսկ արևը մայր է մտնում... խաւար պատում աշխարհին,
Խաւար մահուան պատում է և՛ խղճուկ, Թօշնած վարդերին...

1889. 23 սեպտեմբերի.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՄԱՀԸ

(Ալէքսանդր Պոպից)

Երկնային դու կայծ, վեհաշունչ հոգի,
Թօթափի՛ր քեզնից այդ քունը մահուան,
Քուն տկար մարմնի, քուն երկչոտութեան,
Դա անմիտ խաղ է չարաշուք բախտի...

Հասել է քո ժամն, ո՛վ վսեմ հոգի,
Փշրի՛ր կաշկանդող շղթան բռնութեան,
Եւ թռի՛ր դէպի սուրբ աղատութեան
Աղբիւրն անսպառ—աղբիւր նոր կեանքի:


Լսի՛ր, տես, քո շուրջ սուրբ հրեշտակներ
Երգում են և քեզ տալիս քաղցր աւետ.
«Դէպի մեզ, քուրի՛կ, թռի՛ր դու մեզ հետ...»
Եւ մթնանում են իմ պայծառ աչեր...

Շունչս կորսում է... ղյժերս հասնում
 Խօսում եմ անկապ, խըլումս եմ ուշքից...
 Օհ, աստ, հողի՛, փարատի՛ր դու ինձ,
 Մի՞թէ սորան չեն մարդիկ մահ ասում:

Թռչում է երկիր... թռչում, սլանում...
 Բայց ահա նա էլ ծածկուեց իմ աչքից.
 Էլ բան չեմ տեսնում, բայց երկնքից,
 Այնտեղ սերովբէք տաղեր են հիւսում:

Ուզում եմ թռչել... և՛ ես ձեզ նման,
 Ո՛վ ազատ ողիք, տուէ՛ք ինձ թևեր...
 Ա՛խ, ուր է, ո՛վ մահ, սուրբ մահաբեր,
 Ո՛ւր յաղթանակըդ, մռայլ գերեզման...

1889. 28 սեպտեմբերի.



ՊԸՆԴՈՒԽՏԻ ԵՐԴԵՐ

I.

ՍՈՒԱԿԻՆ

Ուզում ես դու, սիրուն սոխակ,
 Տեսնել ելեմ ծաղկափառ,
 Շնչել վարդի բոյրն անուշակ—
 Թռի՛ր դէպի ձայ աշխարհ:

Ուզում ես դու հնչել անվախ
 Երգըդ անկեղծ ու ազատ,
 Երգել սիրոյ ժամեր խաղաղ—
 Թռի՛ր դէպի Այրարատ:

Այնտեղ պայծառ, այնտեղ անոյշ
 Քեզ կըժպտի ճոխ գարուն.
 Այնտեղ վարդի ծոցում քնքոյշ
 Դու կըղտնես սէր անհուն:

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արեւ, ու աստղեր.
Այնտեղ ծիծաղ, ժրպիտ, բերկրանք,
Այնտեղ կեանքն է անվերջ սէր:

Թռի՛ր, սոխակ, դու հարազատ
Երգիչ սիրոյ զգացման.
Թող բիրտ երկրում ապուսն աղատ
Հնչէ սիրով իւր զաղան...

1889. 20 մարտի.

ՄՈՍԿՈՒԱ.



II.

ՄԱՅԻՍԻ Մէկը

Սքանչելի գարնան այս քաղցր ժամին,
Երբ բրնձթիւնը չքնաղ հարսի պէս,
Պճնուած, զարդարուած, ժպիտը դէմքին,
Կարծես հարսանեաց տօնում է հանդէս.
Եւ լուսոյ աղբիւր—արեւը պայծառ.
Անամպ երկնքից անոյշ ժպտելով,
Առատ ցողում է շիթեր ոսկեվառ,
Այդ ճոխ հանդիսին վսեմ փայլ տալով.
Եւ իմ չորս բոլոր բուռն հրճուանօք
Եռում է կեանքը բրնձթեան ծոցում.
Տեսնում եմ մարդիկ երջանիկ, անհոգ,
Երգ ու զինիով գարունն են օրհնում...

Այդ քաղցրը ժամին, հայրենիք անդին,
 Ինձ պաշարում է մի այլ զգացում:
 Անյադ տենչանքով իմ մատաղ հողին
 Դէպի կենսատու քո ծոցն է թռչում:
 Եւ բոպէական շքեղ երազներ
 Իսկոյն գալիս են ինձ այցելութիւն—
 Ահա՛ տեսնում եմ քո կանաչ դաշտեր,
 Այդիք ծաղկաւէտ, աղբիւրք կարկաջիւն...
 Ես քո զրկումն եմ... երկիր անուշիկ,
 Եւ ողեշնջուած քո սէրն եմ երգում...
 Բայց, սէ՛ր, յնդում են երազներ գողարիկ,
 Եւ նորից ինձ քո կարօտն է տանջում...

1889. 1 մայիսի.

ՄՈՍԿՈՒՅ.



Տ Խ Ո Ի Ր Վ Է Պ

Նուէր N...ին

I.

Тяжелый крестъ достался ей на долю:
 Страдай, молчи, притворствуй и не плачь;
 Кому и страсть, и молодость, и волю—
 Все отдала—тотъ сталь ея палачь!

Некрасовъ.

Անմեղ հըրեշտակ նա աշխարհ եկաւ,
 Երկնատուր մի զարդ երկրին պարգեւած.
 Յոյս, սէր ու հաւատ նա իւր հետ բերաւ,
 Կուսական սրտի խորքերում պահուած:
 Եւ լի հաւատով, ոսկեվառ յուսով
 Մտերիւմ ընկեր ընտրեց նա մէկին.
 Նա սիրեց նորան անխարդախ սիրով,
 Նորան նուիրեց իւր սիրտն ու հողին...

II.

Բայց, աւանդ, խղճուէ, պարզամիտ մանկան,
Երկար չը ժպտեց նա այս աշխարհում...
«Սիրուած մտերիմ» ընկերը նորան
Պատրաստեց դռըն, թունաւոր անկում...
Եւ անկաւ մանուկն անբիծ, անարատ,
Վշտամաշ սրտով, փշրուած յոյսերով.
Թօշնեց նա որպէս հրաշալի մի վարդ՝
Պոկուած, տրորուած կոպիտ մասներով...

1890. 31 մայիսի.



Վ Ա Ս Տ Ա Կ

Հոգ չէ, տանջուիր, ջարքանշ մշակ, բրտինք Թափիր դու անվերջ,
Թող բրտինքովդ մայր-երկիրը կշտանայ.
Զուր չի անցնիլ քո տանջանքը. այնտեղ երկրի կրծքի մէջ
Քո բրտինքը նոր ոյժ, նոր կեանք կստանայ:

Տանջուիր, եղբայր, ուրախ սրտով. քո տանջանքում բրտնալից
Կայ սուրբ վաստակ. երկնքիցն է նա օրհնուած.
Թափիր բրտինք, երկրի մշակ, մայր-երկիրը իւր կրծքից
Քեզ լիառատ կը պարգևէ արդար հաց:

1890. 6 յուլիսի.




ՆՈՐԱ ԱԼԲՈՄՈՒՄ

Լուիկ նայում եմ չքնաղ պատկերիդ,
Որպէս սիրովըդ կախարդուած սոխակ,
Նայում եմ պայծառ, սիրուն աչերիդ
Եւ հոգիս կարծես զգում է նոր կեանք:

Կարծես քո գգուող, քաղցր հայեացքում
Ժպտում է ինձ մի նոր սիրոյ դարուն,
Եւ հէզ, ցաւատանջ իմ մատաղ կրծքում
Զգում եմ նորից սիրոյ ջերմութիւն:

Կարծես իմ առջև տեսնում եմ բացուած
Մի նոր հրջանիկ ծաղկալից աշխարհ,
Ուր քո սիրովըդ ճակատս պսակուած՝
Ապրում, շնչում եմ միայն քեզ համար...

Օ՛, օրհնեալ լինի այն քաղցրիկ րոպէն,
Երբ քեզ բոցավառ պատմեցի իմ սէր,
Եւ վարդ-շրթունքիցդ սիրոյս փոխարէն
Ես մի ջերմ համբոյր ստացայ նուէր...



ՄՈՒՐԱՅԿԱՆ

Գիտե՛ս, թէ արդեօք ո՞ւմ դուռն ես եկել,
Տառապեալ եղբայր, դու լի յոյսերով.
Ո՞ւմ սիրտն ես ուզում զթութեամբ լցնել,
Շարժել քո անվերջ ցաւ ու վշակրով:
Արքայավայել այդ մեծ փառաշուք
Բազում յարկերով ճոխ պալատներում,
Ուր աչքըդ յառած՝ թափում ես արցունք,
Եւ խեղդուած ձայնով չոր հաց աղերսում—
Գիտե՛ս, թէ արդեօք անհոգ, անտրտում,
Անծանօթ թշուառ, սեւ աղքատութեան,
Ո՞վ է այնտեղ միշտ երգում ու խնդում,
Անձնատուր եղած կեանքի փափկութեան...
Ո՞ւմ կեանքն է այնտեղ ցերեկ ու գիշեր
Եռում, աղմկում մօլի կրքերով.
Ո՞վ է անխնայ մաշում իւր օրեր
Հեշտասէր կեանքի ղեղխութիւններով...

Փարթամ մեծացած զոռող իշխանի
 Ապարանքն է դա, խղճուկ մուրացկան,
 Որի ճոխ տեսքով խաբուած, երևի,
 Եկել ես և՛ դու շատերի նման
 Աղի արցունքով կեանքդ ողբալու
 Եւ փարթամասէր իշխանի կրծքում
 Զերմ կարեկցութեան մի կայծ վառելու:
 Բայց, աւաղ, զուր են... զուր այդ արցունքներ...
 Այդտեղ չես գտնիլ մխիթար վըշտիդ:
 Անզգայ սրտից յուսալ դուժ ու սէր
 Դէպի աղքատը—ցընորք է անմիա...
 Եւ մի՞թէ տխուր փորձերը կեանքի
 Քեզ չեն համոզել, ո՞վ խղճուկ, թշուառ,
 Որ լացն ու վեշտը ցաւազար սրտի
 Ծաղը ու ծիծաղ են մեծատան համար...

1890. 24 մարտի.




* * *

(ԻՄ ԸՆԿԵՐ ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ)

Այնքան դառն յաւ ու վշտեր
 Կուտակուած են իմ սրտում,
 Որ եթէ քեզ, ազնիւ ընկեր,
 Ողբամ նոցա իմ երգում,—
 Քո առաջն արտասուքի
 Դու կը տեսնես մի մեծ ծով,
 Որ յուզվում է վեշտ ու սուգի
 Սիրտը մաշող փոթորկով...

Բայց կատաղի լողորդի պէս
 Ալիքները ծաղրելով,
 Այդ մեծ ծովում լողում եմ ես,
 Խորին կերպով յուսալով,
 Որ անկասկած և ես մի օր
 Ցանկալի ափ կը հասնեմ,
 Ուր աղատուած իմ խեղճ եղբօր
 Ցանջուած կրծքիս կը սեղմեմ...

1890. 12 ապրիլի.



ԱՄ, ԵՐԱՆԻ ԶԷ...

ԱՄ, Երանի չէ՞ մի օր մեր առաջ
Բացուէր ցանկալի մարտի դաշտն ահեղ,
Ուր և՛ հայորդին՝ խղճով, ցաւատանջ
Գէթ սրով անէր իւր ցաւին մի դեղ:
Ուր կարողանար նա արեան գնով
Ազգին պարգեւել յաղթութեան պսակ,
Կամ թէ չէ յաղթուած, բայց աղատ հողով
Շունչ փչէր իբրեւ ազգի նահատակ:

ԱՄ, Երանի չէ՞ այս ստրկութիւնից
Զօրաւոր ձայնը սուրբ ազատութեան
Գոչէր մեզ մի օր դէպի ոգելից
Քաջ ձակատամարտ կեանքի և մահուան.

Այնտեղ սուր ձեռքին, բոցերի միջին,
Պատրաստ մեր կեանքը ազգին զոհելու,
Մենք ցոյց կը տայինք ամբողջ աշխարհին,
Թէ ո՞վ է կոչուած ըստրուկ ապրելու...

Այնտեղ միաշունչ, միաբան հողով
Մենք կը հնչէինք երգն արիութեան,
Եւ յաղթանակի մեծաշուք փառքով
Մենք կը փշռէինք բռնութեան շղթան...
ԱՄ, Երանի չէ՞, ո՞վ ազգ իմ թշուառ,
Հասնէր այդ օրը, բացուէր քո առջև
Քաջ կռուի դաշտը, այնտեղ քեզ պայծառ
Կը ժպտէր անշուշտ նոր կեանքի արեւ...

1890. 15 յուլիսի.



ԷԼ ՄԻ՝ ԽՆԴԻՐԻՐ...

Էլ մի՛ խնդրիր, մանուկ սիրուն
Տանջուած սրտից քեզ նուէր՝
Ո՛չ երգ այրող, երգ վառվռուն,
Ո՛չ սիրոյ մեղմ նուագներ...

Ձուր են, հոգեակ, քո խանդալեց
Սյդ նոր ժրպիտն ու գգուանք.
Դու չես ցրուիլ իմ հէգ սրտից
Նենգուած սիրոյ տառապանք...

Այն սև օրից, երբ փշրեցիր
Դու յոյսերըս ոսկեվառ,
Անկեղծ սէրըս անարգեցիր,—
Քնարս լռեց քեզ համար:

Այն օրից իմ այրուած սրտում
Ծիջաւ չքնաղ քո պատկեր.
Այժմ անվերջ իմ երգերում
Ես գգվում եմ մի այլ սէր:

Սէր դէպի հոգս ու կարիքի
Քրտինք թափող զաւակներ,
Սէր դէպի իմ ըստրուկ ազգի
Կեանքը մաշող կապանքներ...

Սյդ սէրն է ինձ այժմ, ո՛վ կոյս,
Ոգևորում, սիրտ տալիս.
Նա՛ է բուռն խանդը հոգոյս,
Այրուող նիւթը երգերիս...

1890. 10 լունիսի.



ԹՈՄԱՍ ՄՈՒՐԻՑ

I.

ԵՐԲ ՔԵԶ ԶՆՇՈՒՄ Է

Երբ քեզ ճնշում է թախիժը խորին,
Եւ դու տանջանքով թառանջ ես քաշում,
Ես էլ մի տեսակ, ընկեր իմ անգին,
Կարծես տանջվում եմ, սիրտս է մաշվում:

Բայց երբ արցունք է քո աչքում փայլում,
Արցունք մանկական վառ ցընորքների,
Օ, այդ լացը քեզ այնքան է սաղում,
Երնէ՛կ միշտ այդպէս լայիր, նազելի...

1890. 10 մարտի.



II.

ԱՀԱ՛ ԽԱՀՈՒՄ, ՓԱՅԼՓԼՈՒՄ Է...

Ահա խաղում, փայլվում է պայծառ շողը պարզ ջրում,
Բայց շողի տակ, ալիքներում ցուրտ ու խաւար է տիրում.
Տեսէք, կարմիր վարդ է փթթում և՛ պատանու թշերին,
Բայց սև մտքեր, մռայլ թախիժ պաշարած են նրա հոգին...

Կան անցեալի տխուր վշտեր, որոնց թոյնը դառնալի
Մարդու կեանքը թունաւորում, մեղմում է սիրտ և հոգի.
Եւ էլ մարդը չի ծաշակում, էլ չի զգում ոչ մի բան—
Ո՛չ խնդումին, ոչ սփոփանք, ոչ խոր տանջանք հոգեկան:

Այդպէս պոկուած ոստի վերայ խղճով տերեն է թօշնում,
Եւ էլ զո՛ւր է խիտ անտառում մեղմիկ քամին ղողանջում,
Էլ ի զո՛ւր է արեն առատ ցողում շիթեր վառ, անշէջ—
Տերեն, այո՛, կանաչում է—բայց կեանք չկայ նորա մէջ...

1890. 8 մարտի.



III.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԶԵՉ

(Ազատ Թարգմանութիւն)

Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
 Որ կըռուի դաշտում ընկաք անվեհեր.
 Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
 Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
 Դուք սուր առնելով, սրբով կամեցաք
 Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
 Բայց, աւանդ, ձեզ հետ մեռան ձեր ըղձեր...
 Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ...

Խաղաղութիւն ձեզ, ազգի քանջ որդիք,
 Սև հողն է այժմ ձեզ առել իւր զիրի.
 Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում
 Ահա՛ խնդալից նոր կեանք է եռում.

Նորից փթթել է դարուն ծաղկաւետ,
 Բայց, աւանդ, դուք էլ չէք փթթիլ յաւետ.
 Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իւր զիրի,
 Խաղաղութիւն ձեզ, ազգի քանջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
 Թող չը վրդովուեն ձեր սուրբ նշխարներ.
 Ձեր վերջին կամքը. — «անէ՛ծք թշնամուն»
 Մենք միշտ կըպաշտենք իբրև սրբութիւն.
 Անէ՛ծք և վըրէ՛ժ — զոքա մեր միակ
 Կը լինեն կեանքի հըղօր նպատակ.
 Քրնեցէ՛ք խաղաղ, հերոս եղբայրներ,
 Թող չը վրդովուեն ձեր սուրբ նշխարներ...



ԻՎ.

ՄԱՏԱՂ ԵՐԳԻԶ

Դէպի մարտի ահեղ դաշտն է նա սըլանում սիրտ առած,
Մատաղ հոգոյ, ծաղիկ կեանքի խանդն ու սէրը մոռացած.
Նա թռչում է՝ մի ձեռքումը փայլուն սուրը հայրական,
Միւս ձեռքում՝ իւր տաւիղը—միակ աղբիւր խնդումթեան:

«Օ՛, ոգեշունչ, վառ տաղերի դու իմ անգին հայրենիք,
«Իմ պապերի նուիրական դու օթեան զեղեցիկ.
«Ահա՛ քեզ եմ նուէր բերում, ո՛վ առապեալ խեղձ աշխարհ,
«Եւ իմ կեանքը, և՛ իմ սուրը, և՛ տաւիղըս ոսկեւար»:

Մատաղ երգիչն ընկաւ ահեղ պատերազմի փոթորկում,
Սակայն ծաղիկ հոգին տալով՝ մահուան վերջին տազնապում

Նա շողշողուն իւր սուսերը գոռ ալիքները նետեց,
Եւ քաղցրածայն տաւղի քնքոյշ, նուրբ լարերը կտրատեց:

«Օ՛, դուք լարեր, որքան հզօր, որքան վսեմ, համարձակ
«Դուք երգիս հետ հնչում էիք հայրենիքում սէր ու կեանք.
«Բայց ինչպէ՛ս դուք այժմ այնտեղ ազատ հնչէք, խեղձ լարեր,
«Ուր տառապեալ ստրկի ձեռքին խուլ հնչում են շղթաներ...»

1890. 16 փետրուարի.



Մ Ա Ն Ո Ւ Կ

Մանուկ նաղելի, մանուկ զեղեցիկ,
Որքան մաքուր ես, որքան անարատ,
Հայեացքով պայծառ, ժրպիտ քաղցրիկ,
Փթթում ես, որպէս հրապուրիչ մի փարդ:


Ազատ առօրեայ մաշիչ հոգսերից,
Հանդիստ ես առնում դու մօրրդ կրծքին.
Ձեն յուզում սիրտդ կրքեր թունալից,
Պարզ ու պայծառ ես նայում դու կեանքին:

Կեղծ զգացումներ օտար քո սրտին,
Անկեղծ խնդում ես և անկեղծ տխրում.
Անկեղծութիւնը քո չքնաղ դէմքին
Շողում է որպէս աստղը երկնքում:

Օ՛, մանուկ սիրուն, մանուկ շնորհալի,
Անմեղ, անբիծ ես որպէս հըրեշտակ.
Դու կախարդում ես մարդու միտք, հոգի,
Դու տանջուած սրտին և՛ սէր ես, և՛ կեանք:

Անսահման սիրով նայում եմ վերադ,
Եւ ինձ այրում է մի ջերմ զգացմունք—
Ա՛խ, երանի՜ չէ այդպէս անարատ
Մընայիր դու միշտ, սիրասուն մանուկ:

1890. 23 յուլիսի.



Մ Ա Յ Ր

(ՈՐԲԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

I.

Մայր ունէի, մայր նստելի—
Մի փափկասիրտ արարած.
Բուռն սիրով նորան էի
Սիրաս ու հոգիս նուիրած:

Նա էր միակ իմ պաշտելին,
Միակ ծաղիկն իմ հոգոյս.
Նա էր իմ թոյլ, մանուկ կեանքին
Միակ նեցուկ, միակ յոյս...

Նա էր աղբիւր իմ խնդութեան,
Աղբիւր առատ, անսպառ.
Նորա կրճքին երջանկութեան
Վարդ էր ծաղկում ինձ համար:

Եւ ես ուրախ, ես երջանիկ,
Որպէս անհոգ մի թռչնակ,
Նետվում էի միշտ մօրս զիրկ,
Վայելում սէր ու զգուանք:

Նորա գրկում, փափո՜ւկ գրկում
Հոգիս խաղաղ ու հանգիստ.
Ձէի տանջվում, չէի զգում
Կեանքի հոգսեր, կեանքի վիշտ:

Եւ թւում էր ինձ՝ երջանկիս,
Թէ այդպէս միշտ, յարատե՛
Ինձ կը ժպտի մայր-նստելիս,
Որպէս կեանքիս վառ արեւ:

Սակայն, աւա՛ղ, մահն անիրաւ,
Մահն անողոք ու դաժան

Աղիզ մօրըս խլեց, տարաւ,
Տարաւ անդարձ, յաւիտեան...

Ո՛հ, էլ չունիմ ես մայր անգին,
Որ ինձ սիրէր, փայփայէր...
Որ իմ խղճուկ, անտէր կեանքին
Թե ու թիկունք նա լինէր...

1890. 15 լունիսի.



II.

Զգացե՞լ էք դուք անգին կորուստի
Սիրտը կեղեքող խորին դառնութիւն.
Կամ ճաշակե՞լ էք դառն հրաժեշտի
Վերջին վայրկեանի վիշաւ ու թախծութիւն:

Պատահե՞լ է ձեզ արդեօք գէթ մի ժամ
Տեսնել ձեր շուրջը լուռ ամայութիւն.
Զգալ ձեզ մենակ, անտէր, անխնամ,
Լացի մէջ միայն գանել փրկութիւն...

Օ՛հ, որքան ծանր են, որքան դառնաղին
Սյգ յնցումներն հոգոյ տառապման...
Եւ այդ ամենը զգաց իմ հոգին,
Երբ խղճուկ մօրըս դրի գերեզման...

1890. 16 լունիսի.



10 ԱՊՐԻԼԻ

Թմրած աշխարհը կեանք առաւ նորից,—
Ահա ամեն տեղ

Քո սէրն է երգւում, դարձն ոգելից,
Գարուն շնորհագեղ:

Անտառի խորքում քո սէրն է երգում
Սիրահար սոխակ.

Մաղկալից դաշտում քեզ է հեղ ժպտում
Սիրուն մանուշակ:

Մատաղ գառնուկներ լեռան լանջերում
Քաղցր մայիւնով՝

Հովուի սրնդի հետ քեզ են ողջունում
Ներգաշնակ ձայնով:

Քո գալն են օրհնում արե ու աստղեր,
Եւ երկինք անամպ.
Քո սէրն են երգում թէ՛ մանուկ, թէ՛ ծեր
Անկերջ ցնծութեամբ:

Թմրած աշխարհին կեանք տուիր նորից,—
Ահա ամեն տեղ
Քո սէրն է երգւում, դարձն ոգելից,
Գարուն շնորհագեղ:

1890. 10 ապրիլի.



ՄԻ՝ ՀԱՒԵՏԱՐ

Մի հաւատար դու ծիծաղկոտ կեանքի խաղաղ վայելքին,
Յաճախ փայլուն, կեղծ դիմակ է շողում նորա չար դէմքին,
Որպէս երազ, մէկ էլ տեսար, այդ վայելքը խաբուսիկ
Օղը ցնդեց—և քեզ նորից ձնշեց կեանքի փոթորիկ:

Թող քո առաջ կեանքը բանայ հրրապուրիչ մի աշխարհ,
Ուր վայելես դու լիառատ օրեր անվիշտ ու պայծառ.
Թող կախարդէ նա քո ուշքը երջանկութեան տաղերով,
Թող խոստանայ նա յարատե քեզ մի վիճակ անվրդով...

Դու մի խաբուիր, մի հաւատար այդ վայելքին հեշտութեամբ,
Եւ կ'աց զինուած միշտ կեանքի մէջ հոգոյդ բոլոր զօրութեամբ.
Զինուիր տոկուն կամքի ուժով, զինուիր սրտով քաջայաղմ,
Որ և՛ կեանքի փոթորկի դէմ դու մարտնչես անվհատ:

Դու շատ անգամ հոգս ու վշտից ուժասպառ և վաստակած
Կեանքի ծոցում քեզ կը գտնես անդորրութիւն քո փնտրած.
Սակայն երբէք մի մոռանար, որ այդ հանգիստը կեանքի
Իւր մէջ գաղտուկ պահած ունի և՛ փոթորիկ տանջանքի...

Այդպէս երբեմն և՛ լողորդին խաղաղ ծովը ժպտելով,
Խոստանում է նորան հասցնել նաւահանգիստն անխռով.
Սակայն որքան գոռ ալիքներ մրրկածո՜ւփ, փրփրադէ՜ղ
Լուռ պահում է նա իւր կրծքում աչքից ծածուկ ու անտես...

1890. 10 յունիսի.



Թ Յ Ո Ւ Ա Ռ Ի Ն

Ո՞վ ես դու, եղբայր,— քեզ չեմ ճանաչում,
Բայց քո սրտամաշ լացը տեսեկես,
Ե՛ւ ես վշտացած արցունք եմ թափում.
Յուզվում է սիրտըս, տանջվում է հոգիս:

Մի՛շտ ախուր, տրտում, մի՛շտ լուռ, միայնակ, —
Դու չես մասնակցում կեանքի խնճոցին.
Զկանքեղ համար ո՛չ սէր, ո՛չ բերկրանք,
Հայն ու տանջանքն է միայն քո բաժին:

Թափառում ես դու խուլ փողոցներում,
Փախում, ծածկվում ես մարդկանց հայեացքից.
Կարծես մարդկանցում էլ չես հաւատում
Դանել անկեղծ սիրտ վշտիդ կարեկից:

Կարծես քո աչքին բովանդակ աշխարհ
Սառցապատ ծով է անկարեկցութեան,
Եւ քո արցունքը— աշխարհիս համար
Անսպառ աղբիւր վայրագ խնդութեան:

Օ՛, ո՛չ, հաւատա՛, եղբայր իմ թշուառ,
Դու հոգուս անկեղծ, խորին զգացման.
Հաւատա՛, որ քո տանջանքի համար
Շնորհներն են անկեղծ տանջվում ինձ նման...



ԵՐԿՈՒ ԳԻՇԵՐ

I.

Այն գիշերը կախարդիչ էր
 Նուիրական իմ հոգուն.
 Երգում էի ես վարդ ու սէր,
 Օրհնում սիրոյ վարդ-գարուն.
 Այն գիշերը զարնանային
 Ինձ նոր կեանք էր ներշնչում:
 Ինձ ժպտում էր սիրուն լուսին
 Աստեղավառ երկնքում.
 Եւ նազելիս անյագ սիրով
 Յառած վերաս իւր աչեր,
 Շնչում էր մեղմիկ ձայնով՝
 «Սիրում եմ քեզ, իմ ընկեր...»

II.

Տաղակալի է այս գիշերը,
 Յուրա է պատել իմ սրտին.
 Ինձ չեն ժպտում էլ աստղերը,
 Էլ չի շողում պարզ լուսին.
 Օհ, այս գիշերն աշնանային,
 Որպէս խորին տառապանք,
 Պաշարել է իմ խեղճ հոգին,
 Զկայ էլ սէր, սիրոյ կեանք...
 Եւ ես մենակ թափառում եմ
 Աւեր, անշուք պարտիզում,
 Ես վշտանում, տառապում եմ,
 Սիրոյս կորուստն եմ ողբում...

1890. 8 յուլիսի.



ԶԻՆՈՒՈՐԻ ԵՐԳԵՐ

I.

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա՛ղգ իմ խղճուկ, տառապեալ.
Եւ քեզ արեան ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ:

Դու ես փառքը քաջ ղինուորիս,
Փառք ու պարծանք, ինձ համար.
Օ՛, առանց քեզ կեանքը աչքիս
Ե՛ւ մռայլ է, և՛ խաւար:

Այն օրից, երբ թո՛թով լեզուով
Ես սուրբ անունդ հնչեցի,
Անտէր փառքիդ, մօրըս ուխտով,
Ես ջերմ պաշտպան դրբուեցի:

Այն օրից, ո՛վ ազգ իմ թշուառ,
Քո գերութեան կուռ շղթան
Դարձաւ կապանք և՛ ինձ համար,
Ցաւ ու տանջանք անսահման...

Եւ ճնշում է հոգիս անյաղթ
Այդ կապանքը ստրկական.
Նա կոչում է ինձ դէպի դաշտ,
Դաշտ բոցերի և արեան...

Քո սիրովն եմ միայն շնչում,
Ա՛ղգ իմ խղճուկ, տառապեալ.
Եւ քեզ կռուի ահեղ դաշտում
Ես պատրաստ եմ հոգիս տալ...

1887, 14 մարտի.



Գողան, շողշողան, պողպատե իմ սուր,
 Իմ անգին ընկեր.
 Հալածուած ազգիս դու խաղաղ կեանք տուր,
 Եւ պայծառ օրեր...

Հերի՛ք է որքան քեզ իմ մտերիմ,
 Սէ ժանգը պատեց.
 Որքան թշնամին—ազգիս ռիսերիմ
 Քո ղյժը ծաղրեց...

Թող չար ոսոխը քո ծայրով խոցուած
 Տապալուի դեմին.
 Թող փայլէ պըսակ՝ իմ արեամբ զընուած՝
 Ազգիս ճակատին...

Գողան, շողշողան, պողպատե իմ սուր,
 Ընկե՛ր հարազատ.
 Դու ըսարուկ ազգիս նոր ղյժ ու կեանք տուր
 Եւ օրեր ազատ...

1890 թ. 23 օգոստոսի.

ԲԱՆԱՍՏԵՂԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

(Ե Լ Լ Ի օ տ Ի ց)

Այստեղ հանդիման է եղբայրը մարդկանց,
 Եղբայր և երգիչ մեր ցաւ ու վշտի.
 Սար, դաշտ, գետ, երկինք—ահա քաջ սերտած
 Քաղցր էջերը նրա սիրած գրքի:

Աքսոր ու շղթայ, սարկի հեծեծանք,
 Լացող շինական, հրճուող վաշխառու—
 Ահա չարիքներ, որոնց լծի տակ
 Դատապարտուած էր նա միշտ տանջուելու...

Եւ նա տեսնում էր կիրք ամենուրեք,
 Մոլի արատներ փռուած աշխարհում:
 Սակայն ի՞նչ անէր... այս կեանքից երբէք
 Նա սուրբ մաքրութիւն չէր էլ սպասում...

Նա հալածում էր կեանքի ցեցերին
 Իւր կծու խօսքով, խորին զգուսնքով,
 Երկրիս հզօրին և թոյլ անզօրին
 Նա միշտ նայում էր հաւասար աչքով:

Նա իւր երգերում օրհնանք էր կարդում
 Թշուառ լքեալի արի պաշտպանին.
 Սրդար զայրոյթով անէծք էր թափում
 Սնկուշտ աւաղակ հարուստի զլխին:

Եւ հոգով ազնիւ, կամքով անսասան—
 Նա ջերմ սիրում էր ամբողջ մարդկութիւն,
 Եւ անարգելով ոգին չարութեան,
 Բարձր երգում էր սուրբ ճշմարտութիւն:

1889. 12 նոյեմբերի.



Փ Ր Ո Ւ Գ Ի Ց

I.

ԱՐԾԻԻ ԵՒ ՃԻՃՈՒ

Հսկայ թւերը լայն-լայն տարածած,
 Հզօր Արծիւը ուղղեց իւր թռուիչք
 Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
 Դէպի անսահման կապուտակ երկինք:
 Երկնի սաւառնեց նա խիտ ամպերում,
 Քանի ոյժ ունէր զօրեղ թւերում:
 Եւ վերջ ի վերջոյ յոգնած վաստակած
 Նա նստեց Հսկայ մի լեռան կրճքին,
 Որի գագաթը մինչ երկինք հասած,
 Սարսափ էր ազդում վերեւ նայողին:
 Նստեց Արծիւը անվախ, անվրդով,
 Եւ շուրջը զոռոզ հայեացք ձգելով,
 Նա արքայական իւր ձայնով ահեղ
 Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
 Մենակ ու ազնաւ այս լեռան վերայ,
 Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.

Իմ դահն է—անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր—ոտքիս պատուանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել դահիս բարձրութեան»...
—«Ես...»

Հսուեցաւ յանկարծ մի ձայն թոյլ բարակ
Մեծապանծ թռչնի հէնց ոտքերի տակ.
—«Ես... անձրեային ծիծուս աննշան»:
«Ի՞նչպէս, դու այստեղ, իմ դէմ յանդիման...
Աստ՛ ինձ շուտով, ծիծո՛ւ անպատկառ,
Ո՞րտեղից դու այս ամպերին հասար»...
—«Այն նեխուած ճահճից, Արծի՛ւ ինքնագով,
Ուր դու ծնուած ես քո այդ վեհ փառքով.
Այն նեխուած ճահճից, ուր որ այժմ դու
Զգվում ես անգամ հայեացք ձգելու»:
«Բայց ի՞նչ հնարքով, դու միջսա չնչին,
Հասար իմ անհաս, ամպաղարդ դահին.
Աստ՛, պատմի՛ր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով»...
— «Ի՞նչպէս:—Սողալով, Արծի՛ւ, սողալով»...

1889. 27 մայիսի.



II.

Մ Ե Լ Օ Դ Ի Ա.

ԳԻՐԳ ԵԼԻՑ, ԳԼ. ԺԳ. 15. ՄԻՔԻԱ, ԳԼ. Բ. 10.

Ե՛ւ աչքըդ պայծառ, Լ՛ քայլըդ հաստատ,
Ե՛ւ ձայնըդ առողջ... Օ՛ր, ա՛ղբ իմ անդին,
Էլ ի՞նչ ես այդպէս տխուր, յուսահատ,
Գլուխդ խոնարհած՝ կանգնել կէս ճամբին.
Դու միայնակ չես, ա՛ղբ իմ սիրելի,
Տէ՛ս քո որդիքը ահա խմբովին
Քո գիրկն են դարձել՝ վառ յոյսերով լի.
Սեղմի՛ր դու նոցա քո ծերուկ կրճքին,
Եւ համբերելով ամեն դառնութեան,
Յուսավառ սրտով, անվախ, անսասան
Գնա՛ դու յառաջ,
Ա՛ղբ իմ յաւատանջ:

Գրնա՛—Հին երգի ձայնին ունկնդիր,
 Քեզ գալիք փրկող դարերն են կանչում:
 Քեզ ոլոտ, կայծակ ձայնում են «ղարթի՛ր»,
 Քեզ փոթորիկը սուրբ Հիմն է երգում.
 Գրնա՛—Թո՛ղ ճերմակ, ալեղարդ զըլխիդ
 Ամպեր ու մրրիկ որոտան ուժգին.
 Պայծառ երեսիդ յուսալից ժրպիտ՝
 Համարձակ նայի՛ր դու ապագային.
 Գիտեմ, վիճակըդ, ծանր է, թունաւոր,
 Բայց դու անվհատ, անզգ իմ ալեւոր,
 Ա՛յդ իմ վշտատանջ,
 Գրնա՛ միշտ յառաջ. . .

1890. 8 մարտի.



* * *

Տեսայ պարտիզում մի անհոգ մանուկ ժրպիտը դէմքին
 Վարդի մօտ վազեց,
 Ուզեց հոտ առնել, բայց սուր փշերը ձեռքը խոցեցին
 Եւ նա շատ լացեց:

Այդպէս և կեանքում, ո՛վ կոյս զեղեցիկ, ծիծաղկոտ դէմքով
 Ես քեզ մօտեցայ,
 Սէրըդ խնդրեցի, բայց սիրտըս խոցուած քո ցուրտ խօսքերով,
 Ես արտասուեցայ...

1890. 2 հոկտեմբերի.



Գ Ե Տ Ա Կ

Քի՛չ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաջիւն,
Սնկեանք ձրմրան ցուրտ կապանքը կրօնելով.
Քի՛չ էլ սգա... և ուր որ է քեզ դարուն
Նոր կեանք կրտայ՝ քո լաց-սուղին վերջ տալով:

Եւ ազատուած սառցէ մաշող կապանքից,
Նորից, գետակ, կըթռչկոտես համարձակ,
Եւ կարկաջդ՝ ազատ ելած քո կրօնքից՝
Խոր անտառում կ'առնէ ազատ արձագանք:

Քեզ վերեւից կըփայփայէ ժպտելով
Գարնան անամպ պարզ երկինքը կապուտակ,
Եւ գիւթական, հըրապուրիչ գոյներով
Քո ջրերում կըշողշողայ արեգակ:

Եւ վաղորդեան հով գեփիւռը դարնային
Մեղմ կըյուզէ մաքուր կուրծքի կուսական.
Դալար ափիդ պարզ ժրպիտը երեսին,
Քեզ ամօթխած կ'ողջունէ հեզ շուշան:

Քի՛չ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաջիւն,
Դաժան ձրմրան ցուրտ կապանքը կրօնելով.
Քի՛չ էլ, քի՛չ էլ... և ուր որ է վառ դարուն
Նոր կեանք կրտայ՝ քո լաց-սուղին վերջ տալով...

1890. 10 նոյեմբերի.



ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳԻՍՏ

Այնտեղ, այնտեղ, այն լայն դաշտում նուիրական աշխարհի,
 Ուր հանգչում են սուրբ նշխարներ իմ նահատակ պապերի,
 Ուր վեհ փառքով, կար ժամանակ, թնդում էին անվեհեր
 Արիումեան, յաղթանակի հզոր երգ ու նուագներ.
 Այնտեղ, ուր, հո, այժմ մենակ պատկառելին ծեր Մասիս
 Տխուր, մըռայլ նայում է շուրջ, լիշում անցեալն ու լալիս,
 Ուր սգաւոր մայր-Արաքսը լուռ քերելով իւր ափեր,
 Արտասուքով ողորդում է հայ քաջերի շիրիմներ...
 Այնտեղ, այն մեծ դաշտի միջին՝ պապերիս հ, ռասին
 Կըցանկալի և ես զոհուած՝ գտնել հանգիստն իմ վերջին...

1890. 20 օգոստոսի.



ՄԱՅՐ ԵՒ ՈՐԿԻ

— Ինչո՞ւ, մայր իմ, ասա դու ինձ
 Ամեն անգամ երկնքում
 Երբ տեսնում ես յանկարծ մի նոր
 Փայլուն աստղ է շողշողում,
 Դու խանդակաթ, բուռն սիրով
 Ինձ սեղմում ես քո կրծքին
 Եւ նշուլթիւն լի, անսահման
 Պաշարում է քո հոգին:

«Օ՛, զաւակըս, պարզ երկնքում
 Այդ աստղիկը նորածին
 Յիշեցնում է ինձ անցեալը,—
 Քո ծընունդը, իմ անգի՛ն»:

—Հապա ինչո՞ւ, մայր իմ, ասա՛,
 Երբ աստղալեց երկնքից
 Յանկարծ մի վառ աստղ է ընկնում,
 Գընձում, կորչում մեր աչքից,
 Դու ախրում ես, և դալկահար
 Իսկոյն առնում ինձ քո գիրկ,
 Փարում վըզիս, սեղմում կրծքիդ,
 Եւ լալիս ես դու լռիկ...

«Անմէ՛ղ զաւակ, ամէն աստղիկ,
 Որ ընկնում է երկնքից,
 Օ՛, թէ ի՞նչ է նա յիշեցնում...
 Այդ կ'իմանաս դու կեանքից...»

1890 թ. 7 օգոստոսի.



Ե Լ Ե Գ Ի Ը

Դաւար Հովտում երգեց սոխակ՝
 Երգն էր անոյշ ու զողարիկ,
 Եւ յիշեցրեց նա ինձ մի կեանք,
 Անցած մի կեանք երջանիկ:

Ես յիշեցի սիրոյ դարուն
 Եւ հրապոյր խանդավառ,
 Սիրող կուսի պատկեր սիրուն,
 Հայեացք անմեղ ու պայծառ:

Ես յիշեցի քաղցրիկ ժամեր
 Սիրաբորբոք վայելքի.
 Այրող ժըպիս ու համբոյրներ
 Ձերմ, կուսական շրթունքի:

Ես յիշեցի կախարդական
 Շատ գիշերներ, շատ օրեր...
 Սիրող սրբալին նուիրական
 Շատ ցընորքներ ու յոյսեր...

Դալար հովտում երգեց սոխակ,
 Երգն էր անոյշ ու գողտրիկ.
 Եւ յիշեցրեց նա ինձ մի կեանք,
 Անցած մի կեանք երջանիկ:

1890. 11 մայիսի.



* * *

Շուայլ պատանին մեծ դանձ յուսարով,
 Իւր սէրն ու սիրտը քեզ նուէր բերեց.
 Բայց աղքատ, անշուք կեանքով տեսնելով,
 Նա խկոյն քեզնից երես շուռ տուեց...

Դու շատ դուր եկար գոռոզ իշխանին—
 Մեծ տոհմի զաւակ համարեց նա քեզ,
 Սակայն տեսնելով ծագումդ չնչին,
 Նա հիասթափուեց ու դարձրեց երես...

Եւ չեղաւ մէկը, հրաշալի մանուկ,
 Որ քեզնից խնդրէր հարուստ զգացմունք.
 Որ ասէր. «ձվ կոյս, կայ քո մէջ արդեօք
 Ազնիւ սիրտ ու սէր և սիրոյ բորբոք»...

1890. 2 սեպտեմբերի.



Փափագում էի գոնէ երազում
 Տալ սիրտս անվախ սիրոյ զգացման.
 Գէթ ցնորքների մաքուր աշխարհում
 Որեւէ քեզ ազատ, մանուկ անման:
 Ես խնդրում էի մի ժամ երջանիկ,
 Մի խաղաղ անկիւն, ուր հեռու մարդկանց
 Ծաղը ու ծանակից, քեզ, կոյս զեղեցիկ,
 Բանայի սիրտըս՝ սիրոյդ նուիրած...
 Եւ հասաւ ժամը այդ երանական...
 Տեսնում եմ ահա՛ ցընորքի աշխարհ,
 Ահա՛ և անկիւնն այն նուիրական,
 Ուր չըկայ ոչ ոք: Ուր միայն պայծառ
 Ժպտում է լուսին զարնան զիշերի,
 Յօլում են սասողեր: Եւ մեղմ, հովասուն

Գարնան զեփիւռը այնքան հեշտալի
 Մեզ խաղաղութեան բերում է ողջոյն.
 Երջանիկ ըոպէ: Միայնակ ենք մենք,
 Միայնակ անկորր բնութեան ծոցում...
 Բայց ինչո՞ւ ես լուռ, միայն վշտաբեկ
 Նայում եմ վերադ, և իմ աչքերում
 Զգում եմ այրող, ծովացած արցունք...
 Ինչո՞ւ փափագած այս անգին ժամին
 Չեմ սեղմում կրծքիս քեզ, չքննող մանուկ.
 Ինչո՞ւ քո առջև իմ մատաղ հոգին
 Չեմ փռում ազատ, և անվախ ես քեզ
 Իմ սէրն ու վիշաք չեմ բերում պարզե...
 Ինչո՞ւ... Օ՛, սիրտ իմ, մի՞թէ զգում ես,
 Որ այս վայելքն է—ցընորք կարճատև,
 Խաբուսիկ վայելք զսղարիկ երազի.
 Որ, աւանդ, խսկոյն անդարձ պիտ ցնդի...



* * *

Այ վարդ, լսի՛ր աղաչանքիս,
Թո՛ղ տուր թփից քեզ քաղևմ,
Եւ քեղանով սիրած կուսիս
Փափուկ կուրծքը զարդարեմ:

Մի՛ վախենար, նորա կրծքին
Չես թառամիր, քեքո՛ղ վարդ.
Այնտեղ մատաղ կրծքի տակին
Կենսքի աղբիւր կայ առատ...



ԱՍՏՈՒԱԾ - ՆԱՀԱՏԱԿ

Թո՛ղն ու լեզի Քեզ արբուցին,
Ո՛վ մեծափառ Նահատակ,
Տխուր մահուան Քեզ մասնեցին
Մարդիկ լիտի, անասու:

Աստուածային վեհ ճակատիդ
Փշեայ պըսակ բոլորած,
Քեզ ծաղրեցին մարդիկ անմիտ,
Մարդիկ հոգով ստրկացած:

Գաղանի պէս վայրագացած,
Քո դէմ զինուէց կոյր խուժան.
«Ի խաչ, ի խաչ»—նա որոտաց—
«Ի խաչ հանէք դուք Նորան...»

Եւ նա, որին անկեղծութեամբ
Դու Քո ձեռքը պարզեցիր,

Որի սրտում Գո մեծ ռւսմամբ
Նոր կեանք ու լոյս սփռեցիր:

Նա, որին Դու դիրկըդ բացած,
Քեզ մտերիմ կոչեցիր,
Որի հետ Դու սեղան նստած
Ձեռքիդ հացը կիսեցիր—

Նա՛ անգամ քեզ, Տէ՛ր-Նահատակ,
Դարձաւ ոսոխ, դաւաձան,
Սուրբ պատկերիդ զրոշմեց անարդ,
Թռնոտ համբոյր մատնութեան...

Բայց Դու հանգիստ տարար մարգկանց
Անդուսպ ծաղըն ու չարութիւն.
Նոցա սիրով Դու ներշնչուած,
Զոհեցիր շունչ և արիւն...

Դու մահացար մարդու ձեռքով,
Որ տաս նորան մի նոր կեանք.
Դու սիրեցի՛ր և այդ սիրով
Տարար հզօր յաղթանակ...

1890. 20 հոկտեմբերի.

* * *

Մի՞թէ արդէն, ո՞վ ընկեր իմ, յոգնեցար
Դու տանջանքի ճնշող լուծը կրելով,
Որ այժմ թոյլ, սրտով հիւանդ, ցաւազար
Մահ ես խնդրում, կեանքից երես դարձնելով:

Զէ՛ որ, ընկե՛ր, դու անձնուրաց երդուցիր
Խեղճ՝ եղբորդ փրջին շունչդ զոհելու,
Եւ կեանքի մէջ արի զինուոր գրուցիր,
Մինչ գերեզման չարութեան դէմ կռուելու:

Ո՞ւր է պայծառ, ջերմ արեւ փրկութեան,
Որ թշուառին ազատ դարուն աւետէր.
Օ՛հ, ընկեր իմ, կոպիտ ձեռքը չարութեան
Դեռ անողորմ կաշկանդում է շատ զոհեր...

Արիացի՛ր, ի՛մ մտերիմ, դեռ ապագան ցանկալի
Առա՛տ արիւն, շա՛տ զոհեր է պահանջում.
Տանջուի՛ր—ուրախ բարեկամը թշուառի
Տանջանքումն է իւր պրսակը օրոնում...

1890. 7 հոկտեմբեր.

* * *

Ես չեմ վրդովվում, որ իմ չորս բոլոր անձափանցելի
Տիրում է խաւար խոր տգիտումեան.
Որ հայ եղբայրքս կարօտ բարիքին լուսաւոր դարի,
Խաւարի լուծը կըրրում է անձայն:


Ես չեմ վրդովվում... Ես հաւատում եմ, որ կըգայ մի օր,
Ոսկեշող մի օր լուսատու զարնան,
Երբ կըթօթափէ նա իւր վերայից փոշին դարեւոր,
Փոշին խաւարի, մաշիչ ստրկումեան:

Ես հաւատում եմ, որ նորա առջև մի օր ընդարձակ
Կըբացուի նոյնպէս լուսազարդ ուղին,
Ուր նա կըբալլէ դէպի ազատ կեանք անվախ, համարձակ,
Մշտավառ լուսոյ սուրբ ջահը ձեռին:

Ես հաւատում եմ, որ մի նոր կեանքի փառահեղ գարուն
Ե՛լ նորան մի օր կըժպտի պայծառ.
Ե՛լ նորա՞ կեանքի անամպ երկնքում ուրախ, շողշողուն
Կարմիր ծիածան կըկապէ կամար...

Թող այժմ, եղբայր դու տգէտ, խղճուկ, տանջուես անպաշտպան
Քո այդ ստրկական, անզօր վիճակում.
Խորին հաւատով երջանիկ օրիդ, զալիք փրկումեան
Ես հաւատում եմ և չեմ վրդովվում...

1890. 13 Հոկտեմբերի.



ԿԵԱՆՔԻ ԽԱՉԸ

I.

Ծանր է խաչը, բայց, ընկե՛ր իմ,
Տա՛ր դու նորան համարձակ,
Որ աւերիչ մահն ու շիրիմ
Ձը ջնջեն քո յիշատակ....

Միայն ծանրը խաչը ուսիդ,
Հոգով անյաղթ ու հրդօր,
Մարդկանց սրտում կ'ապրես դու միշտ,
Իբրեւ կեանքի քաջ զինուոր..

1890. 9 սեպտեմբերի.

II.

Տեսէ՛ք քանի՜ դառն ցաւեր ու վեշտեր
Ծանրացել են նորա սրտին քարի պէս.
Քանի՜ աղէտ, ծանր տանջանք ու հոգսեր
Նորա կեանքը հալեցնում են մոմի պէս:

Տեսէ՛ք ինչպէս մրրկածուփ, փրփրալի
Նորա շուրջը կեանքի ծովն է աղմկում.
Եւ զըժնատես ալեքները կատաղի
Նորան անվերջ տանջում են ու հարուածում..

Նորա համար ոչ զարուն կայ խնդութեան,
Ո՛չ երջանիկ, խաղաղ կեանքի պարզ երկինք.
Նա զաւակ է բիւր հոգսերի, դառնութեան,
Նորա կեանքն է—տառապանքի փոթորիկ:

Եւ տանջվում է նա այդ կեանքում չարաչար,
Տանջվում անվերջ, իբրեւ անպարտ նահատակ...
Սակայն ինչո՞ւ նորա դէմքն է միշտ պայծառ,
Հայեացքը վառ, քայլը հաստատ, համարձակ.

Ինչո՞ւ նա միշտ եւ՝ ուրախ է, եւ՝ զրուարթ.
— Կեանքի խաչը նա կրում է անվհատ:

1890. 1 հոկտեմբերի.

III.

Երբ մատաղ կեանքիդ ծաղկազարդ այգին
Տեսնես դու դարձած փշոտ անապատ.
Դարդ ու ցաւերով լցուի քո հոգին,
Եւ կեանքի խաչը ծանրանայ վերադ.
Երբ զգաս դու քեզ անզօր ու վհատ
Խաչիդ ծանրութեան լուռ համբերելու,
Եւ կեանքից զզուած՝ հիւանդ, յուսահատ,
Դու մահ աղերսես՝ հանգիստ գտնելու...

Յիշել՝ դու Նորան, այն հեզ ու խոնարհ
Մարդկային ազգի Մեծ-Նահատակին,
Որ լուռ, անմռունչ՝ մեր մեղքի համար
Այնքան տանջուեցաւ ծանր խաչն ուսին:
Նա սուրբ արիւնով ներկեց Դողգոթան,
Որ մարդկութիւնը նոր կեանք ստանայ.
Նա խաչ բարձրացաւ... Օ՛հ, յիշէր Նորան,
Եւ կեանքիդ խաչն էլ կրթեթեանայ...

1890. 2 հոկտեմբերի.

Մ Ի Հ Ա Մ Բ Ո Յ Ր

Գարնան սկիզբն է: Զմրան կապանքից
Ազատուած գետակն առաջ է վազում
Եւ սառցէ անթիւ փշրուած կտորներ
Ափերից պոկած՝ իւր հետն է տանում:
Միայն մի կտոր ծառի ստուերում
Ամուր կպել է գետակի ափից,
Եւ յնորում է մի համբոյր խլել
Գարնան արեւի պայծառ շրթունքից:

Ցնորքը անցաւ. երկնի վերայ
Ահա շողշողաց արեւը գարնան.
Նայեց ստուերում ծածկուած սառուցին,
Նայեց, հաւանեց ու սիրեց նորան:
Եւ իբրեւ սիրոյ առաջին նուէր,
Արեւը սառցին մի համբոյր դրկեց,
Բայց այնքան այրող, այնքան բորբոքիչ
Որ այդ համբոյրից խղճուկը հալուեց...

1890. 28 դեկտեմբերի.



ԶԵՄ ՆԱԽԱՆՁՈՒՄ

Ո՛չ, ընկե՛ր իմ, չեմ՝ նախանձում
Ես կոյր բախտի ընտրեալին,
Որի փառքը այս աշխարհում
Մեծ տներն են ու ոսկին:
Նորա համար կեանքը չունի
Ոչ մի վսեմ նպատակ.
Նա ըստրուկ է խաւար-ժանգի,
Ըստրուկ հարուստ ու անարգ:

Զեմ՝ նախանձում ես երջանիկ
Եւ սիրավառ պատանուէն,
Որին սիրոյ ժամեր քաղցրիկ
Փափուկ կեանք են խոստանում:
Նորա համար կոյսը չքնաղ
Ե՛ւ հրեշտակ է ե՛ւ՝ աստուած.
Կուսի սիրուն նա իւր մատաղ
Կեանքն ու սիրան է նուիրած:

Ո՛չ ընկեր իմ, ո՛չ կոյր բախտի
Ինձ պարզեաճ այդ փառքին,
Եւ ո՛չ սիրոյ եռուն կեանքի
Ախտաբորբոք վայելքին
Ձեմ նախանձում... Այդ վիճակում
Չնչին է կեանքն իմ աչքին.
Ա՛յլ ըղձեր են սիրտըս յուզում,—
Ես ձգտում եմ ա՛յլ փառքին:

Փառք ծանրագին ու վշտալից
Թո՛ղլ մարդկանցից անարգուած,
Փառք տատասկոտ ու փշալից
Ազնիւ զործով վաստակած—
Այդ փառքին եմ, ո՛վ ընկեր իմ,
Ես նախանձում ողջ հոգով:
Եւ կ'ուզէի մտնել շերիմ
Անմահացած այդ փառքով...



ԱՂԵԻՐ ԵՒ ԱԼԻՔ

(Լօնգֆելլօից)

Ժայռի կրճքից դուրս է բղխում
Աղբիւր վճիտ, սառնորակ.
Թռչկոտում է, յառաջ վազում,
Վազում անվախ, համարձակ:

Իսկ ալեքը ազատ ծովում,
Հեռու, հեռու աղբիւրից,
Մերթ լուռ ու մութ քուն է մտնում,
Մերթ աղմկում փրփրալից:

Բայց աղբիւրը դադար չունէ,
Յառա՞ջ, յառա՞ջ է սահում:

Նա կարօտում, փափագում է
Ինքն էլ հանդիլ լայն ծովում:

Ահա և նա հասաւ ծովին,
Ալիքի հետ միացաւ,
Եւ վերջապէս նորա կրճէին
Իւր հին վիշտը մոռացաւ...

1889. 3 նոյեմբերի.



ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Ալի, օրե՛ր քաղցրիկ,
Օրե՛ր երջանիկ,
Դուք իմ ոսկեշող
Անմեղ մանկութեան,
Ուր պղպէս արագ
Թռաք, սլացաք,
Երազի նման
Անդարձ, յաւիտեան...

*
* *

Ուր տարաք, օրե՛ր,
Դուք պայծա՛ռ օրեր,
Իմ անմեղ ծիծաղ,
Իմ անմեղ հրձուանք.

Ո՞ւր թռար անհետ
 Իմ երանաւէտ
 Դու անհոգ, խաղաղ
 Նաղելի վիճակ:
 Ո՞ւր տարաք, օրեր,
 Դուք մանուկ կեանքիս
 Անվիշտ զգացմունք,
 Ոսկի երազներ...
 Օ՛, ձեզնից յետոյ
 Ծանրացան սրտիս
 Քանի՜ արտասուք,
 Եւ քանի՜ վշտեր...
 Ձեզնից յետոյ ես
 Միայն ըզգացի,
 Թէ ի՞նչ բան է կեանք,
 Կեանքի տառապանք:
 Ես խոր վշտացայ,
 Շնտ անգամ լացի,
 Գլուխս խոնարհած
 Կեանքի խաչի տակ...

*

Ձեզանից յետոյ
 Կեանքը ինձ համար

Դարձաւ վշտերի
 Խռովայոյզ ովկեան,
 Ուր տեսայ թշուառ,
 Տեսայ անպաշտպան
 Շնտ ու շնտ մարդիկ
 Գոռ ալիքների
 Դարձած խաղալիկ...
 Ձեզանից յետոյ
 Առաջին անգամ
 Լսեցի կեանքի
 Ես անվերջ կովում
 Անտուն, անխընամ
 Որբի հառաչանք,
 Լաց ու պաղատանք:
 Տեսայ թէ ինչպէս
 Անդօրն էր ընկնում՝
 Հօրին տալով
 Կեանքի յաղթանակ:
 Տեսայ ես արիւն,
 Անպարտի արիւն
 Գոյութեան կովում
 Առատ թափուելիս:
 Տեսայ ես անարդ,

Շղթայ ու կապանք
Բանտի խորքերում
Կեանքեր մաշելիս...

*


Տեսայ ես զոհեր,
Կենդանի՜ զոհեր
Յաղթութեամբ պսակած
Անիրաւութեան.
Տեսայ ես մարդկանց
Շատ զազիր զօրծեր
Կրքերով լցուած
Մոլի չարութեան:
Տեսայ շատ բաներ...

.
Եւ դեռ ո՞վ գիտէ,
Թէ այսուհետեւ
Քանի նոր ցաւեր,
Քանի՜ դառնութիւն
Դեռ պիտի տեսնեմ,
Պիտի ճաշակեմ,
Քեզ կարօտելով,
Անհոյ մանկութիւն...

*

Ա՛խ, օրե՛ր քաղցրիկ,
Օրե՛ր երջանիկ,
Դուք իմ ոսկեշող
Անմեղ մանկութեան,
Ո՛ւր այդպէս արագ
Թռաք, սլացաք
Երազէ նման
Անդարձ, յաւիտեան...

1890. 10 հոկտեմբերի.



ՄԱՆՈՒԿ - ՓՐԿԻՉ

(ՍՈՒՐԲ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ)

Տեսնել էք դալար բլուրի կրճքին
Գարնան առաջին նազելի ծաղկին
Նախշուն հայեացքով, զըրաւիչ ժպտով անհոգ ծաղկելիս,
Եւ թմրած երկրին կենսաբեր գարնան աւետիք տալիս:

Անցնել էք արդեօք այդ ծաղկի մօտով.
Արբնել էք նորա քաղցրաշունչ հոտով.
Ուշով նայել էք, թէ նորա թուփից, պայծառ հայեացքում
ինչպէս գարունը ցրտացած երկրին նոր կեանք է բերում:

Այդպէս և Մանուկ-Փրկիչը ահա
Գլուխը խոնարհած Մօր կրճքի վերայ,
Գարնան ծաղկի պէս ժպտում է անհոգ—և Իւր լուսավառ,
Փայլուն ժպիտով նոր կեանք է բերում մարդկութեան համար:

Այդպէս և Նորա սիրուն աչերում,
Նորա մանկական զուարթ հայեացքում
Գթոտ երկինքը դաժան աշխարհին, մեղսոտ մարդկութեան
Նոր լոյս է դրկում, նոր օր աւետում վերածնունդեան...

1890. 3 Նոյեմբերի

* * *

Ես չեմ երգում: Իմ երգերում վշտալի
Այն թշուառն է՝ անարգ բախտից հալածուած
Իւր վիճակը անվերջ սրգում ու լալի,
Իւր ցաւերը երգով պատմում նա մարդկանց...

Ես չեմ երգում: Իմ երգերում ցաւատանջ
Այն հարազատ իմ տառապեալ խեղճ եղբօր
Դուք լսում էք խուլ հեծեծանք ու հառաչ
Եւ կարդում էք ազգիս վիշտը դարեւոր...

Ես չեմ երգում: Իմ երգերը լալազին
Արձազանք են մարդկանց վշտի, դառնութեան...
Քնարիս ձայնով արդարադատ երկնքին
Բողոքում են անմեղ զոհեր չարութեան...

Երբ կըգայ օր, մի օր վսեմ, փրկարար,
Կըխորտակուի չարն աւերիչ ու թունոտ,
Եւ թշուառը օրհնելով բախտն ու աշխարհ
Կըողջունէ մի նոր կեանքի առաւօտ...

Երբ չարանենդ, խաւար ոգին բռնութեան
Կըստրկանայ, որպէս անդօր մի գերի,
Եւ արգարի ազատ ձայնը անխափան
Կըխլացնէ, խուլ շաչիւնը շղթայի...

Երբ համաշունչ եղբայրական սուրբ սիրով
Կըհալածուի չար Բաայը աշխարհից,
Եւ այդ սէրը, այդ մեծ սէրը վեհ փառքով
Քաջ յաղթութեան կ'առնէ պըսակ երկնքից։—

Յայնժամ տխուր, լացող երգչի շրթունքից
Դուք կըլսէք ուրախութեան երգ ու տաղ։
Յայնժամ միայն նորա երգում վշտալից
Դուք կըկարդաք և՛ խնդութիւն և՛ ծիծաղ։

Յայնժամ երգիչն անհոգ, ուրախ, բախտաւոր
Լի ցնծութեամբ նա ձեռք կ'առնէ իւր քրնար,
Եւ կըերգէ յաղթանակը փառաւոր
Ո՛վ զու վսեմ եղբայրութեան դադափար...

1890. 23 նոյեմբերի.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Լուսին, զու լուսին, պայծառ ու չքնաղ,
Որ շողշողում ես անամպ երկնքում,
Օ՛հ, քանի՛ քանի՛ անհոգ ու խաղաղ
Դու անցած օրեր իմ միտն ես բերում։
Քանի՛ մանկական յիշողութիւններ
Դու զարթեցնում ես իմ մտքում նորից։
Քանի՛ անմոռաց, սիրուն պատկերներ
Բերում ես հանդէս խորին անցեալից...

Ահա՛ մի պատկեր։ Գիշեր է զարնան,
Անհուն, ասաղալից երկնքի վերայ
Դու շքեղ լուսին առնում ես շրջան,
Եւ որպէս անխօս մի համր վկայ

Լռիկ նայում ես նիրհած աշխարհին,
 Ուր վաստակաւորն վաղուց անխռով
 Քաղցր քուն մտած՝ իւր յոգնած մարմնին
 Հանգիստ է տալիս խաղաղ ժամերով:
 Քընած է անդորր և իմ հայրենի
 Փոքրիկ քաղաքը—վայր նուիրական,
 Ուր աշխարհ եկայ, ուր վայելցի
 Ես այնքան հրճուանք պայծառ մանկութեան:
 Քընած է նա խոր: Միայն յետ ընկած
 Քաղաքի մի խուլ, փոքրիկ փողոցում
 Անշուք տընակի դռան մօտ նստած՝
 Արթուն է մայրս. և՛ ես նորա հետ,
 Գլուխս զըրած նորա ծնկներին,
 Զգում եմ, թէ նա ինչպէս մերթ ընդ մերթ
 Համբոյր է դրոշմում իմ շրթունքներին.
 Զգում եմ, ինչպէս սիրով, կաթոգին,
 Հանդարտ շոյում է նա իմ գանգուրներ.
 Նայում է վերաս, նայում երկնքին,
 Եւ մեղմ շարժվում են նորա շրթունքներ...

Պատմում է մայրս ինձ քաղցր զրոյցներ,
 Պատմում է լուսնի, աստղերի մասին,
 Պատմում՝ թէ ինչպէս անմեղ մանուկներ

Երկրումն էլ մի-մի աստղ են ու լուսին:
 Պատմում է վառուած, լի զգացմունքով
 Հին աւանդութիւնք, հէքիաթ, առասպել.
 Պատմում է այնպէս խորին հաւատով,
 Կարծես բոլորն էլ աչքովն է տեսել:

Պատմում է, ինչպէս մթին աշխարհից
 Մայրասէր որդին իւր կեանքի զընով
 Փրկել է մօրը չար դէի ձեռից,
 Լոյս աշխարհ հանել նորան ապահով...
 Պատմում է, ինչպէս սար ու ձոր ընկած,
 Եղբայրը քրոջ փրկութեան համար
 Անքուն գիշերներ, ծարաւ ու քաղցած,
 Ոտով շրջել է արարած աշխարհ,
 Անցել է գետեր, ծովեր փրփրած,
 Անցել կրօնի, բոցերի միջից,
 Որ հիւանդ քրոջ սրտի ցանկացած
 Խնձորը բերի եղեմի դրախտից...

Պատմում է մայրբն... շատ բաներ պատմում...
 Եւ իմ մանկական անարատ հոգին
 Զգում եմ, ինչպէս իմ մատաղ կրծքում
 Վեր-վեր է թռչում, բաբախում ուժղին.

Եւ ես հիացած՝ մօրլս շրթունքին
Կնքում եմ անվե՛րջ, անթի՛ւ համբոյրներ.
Եւ աղերսում եմ: «Օ՛, մայր իմ անդին,
Պատմի՛ր, մի՛շտ պատմիր դու ինձ հէքիաթներ»...

Լուսի՛ն, դու լուսի՛ն, պայծառ ու չքնաղ,
Որ շողշողում ես անամպ ենկնքում,
Օ՛հ, քանի՛, քանի՛ անհոգ ու խաղաղ
Դու անցած օրեր իմ միտն ես բերում...

1890. 12 նոյեմբերի.



Ց Ա Ն Կ

	էջ.
Մօրս լիշատակին	5
Իմ ուխտը.	7
Պատկեր	9
Բանտարկեալի երգ.	10
Երգեր (Հայնէից). I Մեր իղձն ու փափագ	12
» » II Անհոգ կացիր, ես չեմ պատմում	13
» » III Որպէս չար ծերուկ	14
Սօնէտ	15
Գարուն (մանկական երգ).	16
Զէյթունի հրդեհը (հատուած)	19
Անջատման ժամ.	21
Աշնան վերջը	22
Դարուս զաւակը	24
Ա. Պլեշէեվից. I Գարնան երգ	25
» II Բոլոր մարդիկ եղբայրներ են.	26
» III Ծաղիկ	28
Տապանադիր	30
Սիրավառ սոխակն իւր անուշ երգով	31

Ամբոխին	էջ. 32
Աղօթիք	35
Էլէզիա	36
Բանաստեղծ Սմբատ Շահազիզեանին	37
Մուսա	39
Լերմօնտովից. I Սուրբ տաճարի ղրոան առաջ	41
» II Տապանագիր	42
Զառանցանք (Ուլանդից).	43
Սիրասուն ծաղիկ (Մօրից Հարստմանից)	44
Առաստեան երգ	45
Ծաղիկներ և իղծեր.	47
Զմեռնային գիշեր	48
Երգ և մետաղ	51
Հասարակաց մշակին.	52
Սիրոյ վիշտ	54
Դաւաճանութեան զոհ	55
Հերիք է որքան բախտը խաբուսիկ.	57
Երգեր (Հայնէից) I Գիշեր ցերեկ միայն դու ես.	58
» II Գետափին բուսած շուշանը հեղիկ	59
» III Երկար շողում էր	60
» IV Դու մանուկ չքնաղ	61
» V Ահա նա—անկոչ	62
» IV Որպէս երբեմն գիշերուայ ժամին	63
» VII Այս աշխարհին, ով նազելիս	64
» VIII Նորա իմ կեանքը հալումաշ արին	65
» IX Մանուկ, մի լինիր	66

Առաքեալ	էջ. 67
Սիրելի ես, նուիրական դու իմ քաղցր հայրենիք	69
Բնութեան զրկում	69
Նննդաւորին	74
Կէս գիշեր	75
Սօնէտ	76
Որբեր	76
Աղօթք	79
Րօբերտ Պրուտցից. I Մարգարիտներ և երգեր	80
» II Փոթորկից լետոյ.	83
Երկու վարդ (Մաքս Վալդաուից)	84
Գրիստոնեայի մահը (Ալէքսանդր Պոպից)	85
Պանդուխտի երգեր. I Սոխակին	87
» II Մալիսի մէկը	89
Տխուր վէպ	91
Վաստակ	93
Նորա ալբօմում	95
Մուրացկան	95
Այնքան դառն ցաւ ու վշտեր	97
Ա՛խ, երանի չէ...	99
Էլ մի խնդրիր...	100
Թոմաս Մուրից. I Երբ քեզ ձնշում է	102
» II Ահա խաղում, փալլփլում է...	103
» III Խաղաղութիւն ձեզ	104
» IV Մատաղ երգիչ.	106
Մանուկ	108

	Էջ.
Մայր. I Մայր ունէի, մայր նազելի	110
» II Զգացնէլ էք դուք անգին կորուստի	113
10 ապրիլի	114
Մի հաւատար	116
Թշուառին	118
Երկու գիշեր	120
Զինուորի երգեր. I Քո սիրովն եմ միայն շնչում	122
» » II Շողան, շողշողան,	124
Բանաստեղծի տապանագիրը (Էլլիօտից)	125
Ֆրուգից. I Արծիւ և Ճիծու	127
» II Մելօդիա	129
Տեսայ պարտիզում մի անհոգ մանուկ	131
Գետակ	132
Վերջին հանգիստ	134
Մայր և որդի	135
Էլէզիա	137
Շոալլ պատանին մեծ գանձ յուսալով	139
Երազ	140
Այլ վարդ, լսիր աղաջանքիս	142
Աստուած-Նահատակ	143
Միթէ արդէն, ով ընկեր իմ, լոզնեցար	145
Ես չեմ վրդովվում, որ իմ չորս բոլոր	146
Կեանքի խաչը. I Ծանր է խաչդ, բայց ընկեր իմ	148
» » II Տեսէք քանի՜ դառն ցաւեր	149
» » III Երբ մատաղ կեանքիդ	151
Մի համբոյր	152

	Էջ.
Զեմ նախանձում	153
Աղբիւր և ալիք (Լօնգֆելլօից)	155
Մանկութեան օրեր	157
Մանուկ-Փրկիչ (Սուրբ պատկերի առաջ)	162
Ես չեմ երգում: Իմ երգերում վշտալի	163
Յիշողութիւն	165



